

ՀԱՅԱԿԱՆ ՎՐԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՃԱՇԱԿ

ՈՍԿԵՂԵՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀՕՅՈՅ

ՀԱՆԴԻՍ ԵՐԵՔԱԾՈՒԱՅ

ՊԱՏՄՈՒԱՆ, ԳԻՏՆՈՒԱՆ, ԲԱՆԱՍԻՐՈՒԱՆ
ԱՅԼՈՎՅԻՆ ՀԱՆԴԵՐՁ

ՀԵՐ ԽԵԱՄՈՅ.

Ա. ՄԱՏԱԹԻԱՅ ԴԱՐԱՑԱՇԵԱՆ և Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

Տ Ա Ր Ի Գ .

ԹԵՒ Ա . — Ի ԱՊՐԻԼ

Ի Կ . ՊՈԼԻ Ա

Ա. Ա . Կ . ՊԵՐՊԼԻՔԵԱՆ

1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱԶԴ ԽՆԱՄԱԿՈԼՈՅ ՀԱՆԴԻՇԻԾ

Պ.Ս.Տ.ԱԿ.Ա.Ն

Պատմութիւն Հայ մատենագրութեան Ա. Մ. Գ.
Քննական պատմութիւն Հայոց Ա. Մ. Գ.

Գ.Ի.Տ.Ե.Ա.Կ.Ա.Ն

Բնթայք և յառաջադիմութիւն Բնախօսութեան . . Յ. Գ.

Բ.Ա.Ն.Ա.Ս.Ի.Բ.Ա.Կ.Ա.Ն

Բանք զՀայ լեզուէ Պ. Թ.
Գորտք որ խնդրեն իւրեանց թագաւոր . . . Ա. Մ. Գ.
Առանձինն բանք Հայ . լեզուի (Զ, Է և Ը) . . . Յ. Գ.



ՃԱՇԱԿ

ՊՈԿԵԶԵՆ ՊՐԵՐԱԲԵՍՆ

Ա 2 Դ


ԽՆԱՄԱԿԱԼԱՑ ՀԱՆԴԻՍԻՒ

Յետ զերկեամ մի ողջ բովանդակ ի լոյս ածելոյ զ՛շանդէս մեր ամսօրեայ . — Եւ թուի մեզ թէ ոչ ամենեւին առանց օգտի , — վասն առաւել իմն ամփոփ ընծայեցուցանելոյ ըստ նիւթոց , զոր մանր ի մասունս կոտորեալ ցարդ մատուցանէաք ընթերցանելեաց յակամայ կամս մեր , յօրէ աստի եւ անդր երեքամսեայ ժամանակաւ հանցուք զաա ի հրապարակ , այլ առանց ինչ համառօտելոյ ըստ բովանդակութեանն , այն է՝ էջս քառասուն եւ ութ բովանդակեսցէ մէն մի ի չորից օրինակաց միամեայ շրջանի , եւ մերթ եւս հանդերձ յաւելուածով , որպէս զայս նուագ :

Այս կարգ նոր , ըստ կարծեաց մերոց , եւս առաւել հանոյ թուեսցի այնոցիկ որ համէին լընթեռնուլ զ՛շանդէս ամսոյ ամսոյ , եւ բանիւ եւ գրով յայտ առնէին մեզ զգոնութիւն իւրեանց :

Ոչ դադարեսցուք , որպէս ցայժմ , գուն դնել վասն բարւոք լընթացից սորին , եթէ՛ ըստ նիւթոցն լընտրութեան եւ եթէ , որ առաւելն է՝ ըստ լեզուին ազնուութեան , որ ինչ մանաւանդ իննդերի է ի մէնչ յիրաւ :

Խսկ վասն գնոց չունիմք ինչ առնել փոփոխումն այս ամեւս :



ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՍԿԶԲԱՆԻ ԱՆՏԻ ՄԻԵԶԵԽ ԹԱՌԱԶԻՆ ԿԵՍ ԱՆԴՐ Ե. ԴԱՐՈՒ

Ի Դ. Թուի Ճաշակիս, ապրիլ 1, էջ 54, ամին անցելոյ, խօսեալ մեր զառաւելութենէ լեզուին զոր սովորութիւն է կոչել թարգմանչաց կամ Ուշեցն բարութիւն, ասացաք. «Զէ դըժուարին ինչ, և ոչ գործ մեծի հմտութեան, տեսանել զանբաւն և զանչափ առաւելութիւն որ կայ ի մէջ լեզուի այսր ազնուագոյն ժամանակի, և ի մէջ լեզուին յաջորդ դարուց: Աւելորդ է ստկայն խօսել զայսմանէ այլ եւս երկարագոյնս: Քան զվարդապետութիւն ազգոյ է օրինակն: » Ուստի և ի յաջորդ թիւսն, մինչեւ ի կոստարած տարւոյն, բերաք ի մէջ հատածս համառօտս յայլ և այլ մատենից դարուն այնորիկ, որպէս ի գրոցն Մակարայեցւոց, եւս համառօտս՝ ի բուզանդայ, յեղնկայ և ի Քրոնիկոնէն Եւսեբեայ. հուսկ վերջին թուով տըւաք զՅառաջարան թղթոցն Պաւլոսի, չքնաղ հայերէն: Կամիմք դարձեալ ի նոյցունց և յայլոց եւս մեացորդաց դարուն յաճախել օրինակս ընտիրս:

Կորիւն, ի խօսելն զնորոգութենէ կամ զուղղութենէ թարգմանութեան Գրոյն ի ձեռն Սահակայ հանդերձ Եզնկաւ ըստ ստուգագոյն օրինակաց բերելոց ի Կոստանդնուպոլսէ, յետ ասելոյ թէ « Առեալ (Սահակայ) հանդերձ Եզնկաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զիսութանակի զթարգմանութիւնսն, հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք, » յաւելու. « Եւ շատ եւս մեկնութիւն գրոց թարգմանէին: » Հայեցեալ յայս բան Կորեան՝ չիցէ թերեւս անդէպ կարծել եթէ թարգմանութիւնք գործոց Ոսկերերանի և կիւրզի Աղեքասնդրայցւոյ որ են համակ մեկնութիւնք, առաջինքն մանաւանդ, եղեն ի ձեռն Սահակայ և Եզնկայ: Արդարեւ լեզուն թարգմանութեան մեկնութեանցն Մատթէի, Եսայեայ և թղթոցն Պաւլոսի յԱսկերերանէ, արու

և հասուն , պինդ և հոծ , հանդերձ այսու և անխառն հայերէն ,
է յանկագոյն ի լիզուն Եղնկայ , և ոչ օտար ի բռւոյ բարուց
հայրաբարոյին Սահակայ , թէպէտ և չունիմք յայտնի ինչ մը-
նացորդ ի նմանէ : Նիւթ մեկնութեանց , թէպէտ և ցամաք և
լոկ վարդապետական , է տակաւին հիւթեղ և ծաղկալից ծաղ-
կագարդ . իսկ յորդորակքն են առաւել եւս առատ և յորդ ,
մի վայելչութեամբ և գեղով , մինչեւ յապչութիւն զընթեր-
ցողսն կրթել :



ՅՈՎԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԵՆԵՆ Ի ՄԱՑԹԵՈՍ

Ճ. Ա. Ռ. Բ.

Հատածո զոր բերեմք ի մէջ՝ է մուտ ի մեկնութիւն անդր
սկզբան Աւետարանին Մատթէի , լի այլափոխ բանիւք (փոխա-
բերութիւն ,) ընալիր օրինակօք և պատկերօք լուսաւորեալ . լի-
զուն է պարզ՝ սակայն չքնաղ , իսկ թարգմանութիւնն թէպէտ
և գրեթէ բան առ բան , այլ այնպէս իմն վայելուչ է և յստակ
հայացի եւ բանիւքն եւ դարձուածովք , մինչեւ թուել եթէ
թարգմանութիւնն լիցէ բնագիր , և բնագիրն՝ թարգմանու-
թիւն : Գիտել արժան է զի թարգմանութիւնք Ուսկերերանի ոչ
հրաշակերտ միայն են Հայերէն լիզուի , այլ և անստոքիւտ օրի-
նակ մատենագրութեան հանդոյն ընտիր մատենագրաց եւրո-
պացւոց : Լեզուն է ճշդիւ ըստ օրինաց գլուխութեան . չիք անդ
օձտել կամ աղամողել (solécisme .) կարգն ըստ աղնուագոյն
ազգի (լուծական , analyticique .) ոճն հակիրճ և ամփոփ (concise ,)
առանց մթարութեան (clarité) կամ զանց առնելոյ զմիով իւիք
ի պատշաճիցն և ի կարեւորաց , ուստի և մեծ առուն (richesse .)
ի հատանելն ինչ ըստ տեղւոյն՝ չխեղէ (précis ,) և ի յաւելուլն՝
չհեղձուցանէ (diffus .) ի զարդան ոչ մեղկ է և աւելորդօքն սե-
թեւեթեալ , այլ հանդուշն և բարեքիկ (grâce , élégance ,)
նկարէ բնական գունովք (naturel ,) և ոչ ի սնգոյր և ի շպար .
ի լայնելն ոչ ճապաղ և տարած , և ոչ թոյլ և ցիր (diffus ,) այլ
հոծ և պնդակազմ . միով բանիւ՝ դիւրամասոյց առ ամենայն

ազդ գրենոյ (facilité,) գնայ միջին իմն բարձրութեամբ (noblesse,) ունի զանձն ի կշռի՝ առանց անկանելոյ կամ գեղեւելոյ (ferme) որ տկարութեան լեզուի է նշանակ։ Զէ մարթ չփել զնովաւ զրիծն զոր մարթ իցէ թերեւս չփել զԱգաթանգեղոսիւ, զիուզանդաւ և զկորեամբ՝ թէ յաճախեն անուանս կամ միտս որ զմի և զնոյն բան նշանակեն (աւելասդրութիւն, թէ ոնամը զուգադրութիւն, parallelisme.) թիպէտ և այն բիծք բարւոյ մերում են, և ոչ անխտիր զնոյն զհետ երթալոյ։

« Յիշիցք արդեւք զպատուէրն զոր տուաք ձեզ յաւաջագոյն, և աղաչեցաք բազում լրութեամբ և խորհրդական հանդարտութեամբ դնել ունկն ամենայն բանիցն որ ասիցին. քանզի մտանելոց իսկ եմք այսօր ընդ գեղեցիկ դրունսն, վասն որոյ և զպատուէրն յիշեցի։ Զի եթէ Հրեայքն որք ի լեաւոնն ծածկեալ հրով և միգով և մոռախաղով մերձենալոց էին, մանաւանդ եթէ ոչ մերձենալոց, այլ ի բացէ կալոց լսել և տեսանել զայն, երիւք աւուրբք յառաջ հրաման առնուլին ի կին չմերձենալ, զշանդերձն լուանալ, յահի և ի դոզութեան կալ, և այն զի Մովսէս եւս ընդ նոսա էր, որչափ եւս առաւել մըզ որ զայսպիսի բանս լսելոց եմք, ոչ ի բացէ կալ(ով) ի լեռնէ ինչ որ հրով և ծխով վառեալ իցէ, այլ անդր իսկ յերկին մըտանել(ով), պարտ է բազում պարկեցտութիւն ցուցանել. ոչ հանդերձս լուանալ, այլ զպատմուճան ոգւոցն սրբել, և յամենայն աշխարհական ցանկութեանց պարսպել։ Ոչ եթէ մէգ և ծուխ և մասամբուզ տեսանիցք, այլ զթագաւորն իսկ նըստեալ յաթոռ անճառ փառօքն, և զհրեցտակս և զհրեցտակապեաս ի սպասաւորութեան, և զգունդս սրբոցն այնչափ անչափ բիւրաւորս։ Քանզի այնպիսի է քառաքն այն յորտւմ եկեղեցին անդրանկաց է, և հոգիք արդարոց կատարելոց, և ժողովք տօնից հրեցտակաց, և արիւն պակման սրով ամենայն ի մի միաբանութիւն եկն. երկինք ընկալան զայերկրէսն, և երկիր զերկնից. և որ յառաջագոյն իսկ և ի բնէ ցանկալի էր եւ հրեցտակաց եւ սրբոց՝ եկն եհաս խալաղութիւն։ Ի նման կանգնեցաւ նշան խաչին Քրիստոփի, երեւելին և ամենապայծառ, տւար մերոյ բնութեանս զոր թափեաց թագաւորն մեր։

Այսմ ամենայնի ստուգութեամբ՝ խելամուտ հաստատու-

թեամբ յաւետարանացն լիցուք . եթէ զհետ միայն պատշաճ հանդարառութեամբ ստէպ գայցես , կարասցուք զքեղ չըջեցուցանել ընդ ամենայն տեղիսն , և ցուցանել եթէ ուր մահն պրկեալ . ուր մեղքն ի կախաղանի , ուր ի սաստիկ և ի նորաստանչ պատերազմէս և ի կռուոյ նուէրք : Անդ տեսանիցես և զրոնաւորն ի կապանս , և զդ երւոյն բազմութիւն զհետ երթեալ և ի մեծ քաջաքն հասեալ , յորմէ տմենասլիղծ դեւն զամենայն զառաջին ժամանակս : փութացաւ վորատել հանել : Անդ տեսանիցես զծակս գողոյն և զայրս աւազակին յայտնեալ կողոպտեալ , թափուր և աւերտի , քանզի և անդք չոգաւ եհաս թագաւորն :

Այլ մի ինչ ձանձրանար , սիրելի : Քանզի և ոչ եթէ յայտնի պատերազմաց ոք զրոյց ասյր , և զյալթութեանց և զձակատան մղելոյ , յագէիր երբեք , այլ չհամարէիր ինչ քան զայնս սիսի պատմութիւն քաջցրագոյն . և եթէ այն քաջցր իցէ , որչափ առաւել այս : Միտ դիր որպիսի՛ հասանէ լսել . զիարդ անդուստ յերկնից և յարքունի աթուուցն յարեաւ եկն յերկիր , և անդք իսկ յանդունդս գժոխոցն եհաս Աստուած , և ի պատերազմին եկաց ձակատեալ : Եւ զիարդ ընդդէմ ձակատեցաւ սատանայ , մանաւանդ թէ ոչ ընդդէմ Աստուծոյ մերկոյ , այլ Աստուծոյ՝ մարդկեղին բնութեամբ ծածկելոյ : Եւ այն է զարմանալի , յորժամ տեսանիցես զմահն մահու լուծեալ , և զանէծան անիծիւք ապականեալ , քանզի որովք հարստացաւն (զօրացաւ , բռնացաւ) սատանայ՝ նոքիմք քակէր բռնութիւնն : Զարթիցուք այսուհետեւ և մի ննջեսցուք . ահաւասիկ տեսանեմք բացեալ մեղ զդրունսն , այլ մոցուք ամենայն կարգաւորութեամբ (Յն. բարեկարգութիւն , ուղղութիւն ,) ահիւ և դողութեամբ , հասեալ կացցուք իսկ և իսկ յառաջին դրունսն : Զինչ իցեն առաջն դրունքն :

Գիրք , ասէ , լինելոյ Յիսուսի Քրիստոսի , որդւոյ Դաւթի , որդւոյ Արքահամու : Զինչ խօսիս , զմիածնէ որդւոյն Աստուծոյ խօստացար ձառել , և զիաւիթ յիշես , զայր մի որ յետ բազում ազգաց եղեւ , և զնա հայր և նախնին կոչես : Եւ դուհանդարտ լեր , և մի զամենայն միանդամայն խնդրեր ուսանել , այլ մեղմով և սակաւ սակաւ . զի այժմ դեռ առաջի դը-

րացն կաս , մօտ յանդաստական (առաջին դուռն , մուտք) արտաքինս , զի՞ այդչափ փութաս յանմուտսն մտանել . չեւ եւս գարստաքինս զամենայն քաջ նշմարեցեր : Քանզի ոչ եթէ զայնմ ծննդենէ պատմեմ ձեզ , նա և ոչ զմիւսմէն որ յետոյն եղեւ , քանզի անճառ և առանց հասանելց է : Եւ նախ քան զիս զայս քեզ եսայի մարդարէն ասաց , քարոզեալ յառաջագոյն զնորայն չարչարանսն . զարմացեալ հիացեալ թէ զինչ է և զինչ եղեւ , և յոր վայր ուստի' էջ , ըլուսաւորագոյնս իմն բարբառի , եթէ Զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ : Եւ այժմ ոչ զառաջին ծնընդենէն պատմիցեմք , այլ զայսմանէն որ աստ ի խոնարհս յերկրիս եղեւ բազում վկայիւք : Եւ զայսմանէն , որչափ մարթիցէ տոել , ընկալեալ զնորհս Հոդւոյն՝ այնպէս պատմեսցուք . քանզի և այս չէ ինչ հնար թէ ամենեւին բովանդակ կարիցեմք ճառել , զի ահագին է և անքննական :

Եւ արդ մի' փոքր ինչ համարիցիս լսել , յորժամ զայսմ ծննդենէ լսիցես , այլ զարթուցեալ զմիտս ահիւ , թէ Աստուածեկն յերկիր : Եւ այնպիսի' ինչ զարմանալի և նորանշան էր , զի և զգունդս հրեշտակաց կացոյց վկայս նորոց իրացն կատարելոց որ ի վերայ ամենայն աշխարհաց դործէին , և զմարդարէսն յառաջագոյն զարմացոյց յերկրին երեւելով և ընդ մարդկան շրջելով : Նա և նոր իմն և չքնաղ է լսել , եթէ Աստուած անճառն և անհաս , որ ոչ ընդ մոտք փակի և ոչ ընդ գիտութեամբ սահմանի , զօրն հաւասար , ընդ կուսական արդանդն գայցէ , և լինել ի կնոջէ յանձն առնուցու , և ունել նախնիս զԴաւիթ և զՍբրահամ , և որ ահագին և սոսկալի է՝ և զկանայսն զորոց այժմ յիշեցաք զանուանոն : Զայս լուեալ՝ յարուցեալ զարթնուցուս , և մի' ինչ խոնարհագոյնս կարծել , այլ վասն այնորիկ համարել զայս զարմանալի , զի որ որդի է անսկրանն Աստուծոյ , և ստոյդ և ճշմարիտ որդի , առնոյր յանձըն անուանել և որդի Դաւթի , զի քեզ արասցէ որդի Աստուծոյ . յանձն առնոյր - հայր իւր անուանել զծառայն , զի քեզ ծառայիդ արասցէ հայր զՏէրն : Տեսանես անդստին ի գլխոյն , որպիսի' ինչ երեւին աւետիքն . զի եթէ ի քումմէն (ի լինելոյ որդի Աստուծոյ) ինչ երկմտիցես , ի նորայոյն (ի լինելոյ նորա որդի մարդոյ) հաւատասջիր ուսանել . զի աւելագոյն ի մի-

տըս մարդկան այն իմն դժուարին է՝ թէ Աստուած մարդ լի-
նիցի, քան թէ մարդ որդի Աստուածոյ անուանիցի :

Եւ արդ յորժամ լսիցես թէ որդի Աստուածոյ՝ որդի է Դաւ-
թայ և Արքոհամու, մի' ինչ այնուհետեւ յերկուանայցես՝ եթէ
դու, որդի Ադամայ, ոչ լինիցիս որդի Աստուածոյ։ Զի ոչ եթէ
ի զուր ինչ և վայրապար այնչափ գինքն խոնարհեցոյց, եթէ
ոչ հանդերձեալ էր զմեղ բարձրացուցանել։ Ծնաւ ըստ մարմ-
նոյ, զի դու ծննիս ըստ Հոգւոյն։ ծնաւ ի կնոջէ, զի դու ծըն-
ցիս յաւազանէ՝ որ եղերդ որդին Վասն այնորիկ կրկին ծնունդ
(ծնեալ) եղեւ, եւ մեզ նման, եւ ի վեր քան զմեղ։ զի ի կը-
նոջէ ծնանելն՝ այն մեզ է։ և ոչ յարենէ և ոչ ի կամաց
մարմնոյ այլ ի Հոգւոյն սրբոյ՝ այն նմա որ ի վեր քան զմեղ
ծնունդ էր, և որ ի մեզն հանդերձեալ էր կատարել՝ յառաջա-
գոյն գուշակէր։ զի որակէս ինքն տուանց արեան և տուանց կա-
մաց մարմնոյ ծնաւ վերկրորդ ծնունդն, նոյնպէս և մեզ տ-
ուանց արեան և տուանց կամաց մարմնոյ ի սուրբ Հոգւոյն ծը-
նանիցիմք զվերստին ծնունդն։ Նաեւ մկրտութիւնն (Քրիստո-
սի) և այլ ամենայն այսպիսի ինչ՝ սորին օրինակ, զի ունէր
ինչ ի հնոյն, ունէր ինչ և ի նորոյս։ Ի մարդարէին (ի Յովհան-
նէ) մկրտել՝ այն զինն գուշակէր, և Հոգւոյն իջանել՝ այն ըզ
նորս հաստատէր։ Եւ զոր օրինակ զձեռս քակեալս ի միմեանց
անդրէն ոք առ իրեարս ամիսոփիցէ, նոյնպէս և նա զին և ըզ-
նոր անջատեալս անդրէն ի միմեանս յարեաց։

Տեսանե՞ս զլուսաւորութիւն քաղաքին, զիմբդ միայն ի ըս-
կըզբանն պայծառութեամք լուսւորեաց, որակէս եցոյց զթագա-
ւորն ի քո կերպարանս իբրեւ ի ճակատու . քանզի և անդ (ի
ճակատու) ոչ յիւրում պատուին երեւի հանապազ թագաւո-
րըն, այլ հանէ զմադն և փոխէ զպատմուճանն, զի մի ճանա-
չիցի և ձգիցէ յանձն զախոյեանսն։ Իսկ աստ ոչ այսպէս, այլ
զի մի ճանաչիցի, և տացէ վախոււսո դառնալ ի գիրկընդիսառն
լինել նորս՝ թշնամոյն, և զիւրսն խոռվեցուցանիցէ։

ՅՈՐԴՈՐԱԿ Ի ՃԱՌՆ Բ.

Սովորութիւն է Ոսկեբերանի ի վախճանի իւրաքանչիւր ճառի յաւելուլ բանս խրատու և յորդորանաց առ ժողովուրդն ։ ի յորդորակի աստ խրատէ զունկնդիրսն պահելի մաի զոր լուանն, և առ որա լսելոց էին՝ լինել յօժարագոյն։ Ապա յանդիմանէ ըզ-յուլութիւն նոցա յունկնդրութիւն հոգեւորաց, և զյօժարութիւնն ի լոել զրանս խեղկատակութեան և զերգս ցոփութեան, և ցուցանէ նոցա զօդուտն զոր շահի ոք ի վարդապետութենէ և ի հոգեւոր խրատուց։ Լի է յորդորակս օրինակօք և այլափոխ բանիւք։ Խոկ զընարութենէ և զյատակութենէ լեզուին աւելորդ է ասել։ որ ինչ վերագոյնն ասացաւ զայանանէ՝ այն շատ խոկ և բաւականէ։ աստ եւս նոյն հայ բարբառ է հոյակատ և ազնուական քան զոր աւելի չիցէ թերեւս զմտաւ աւծել ոչ ի հոյ լեզուի միայն, այլ և յամենայն կիրթ լեզու։

«Եթէ զայս պահիցէք, եւս յօժարագոյն զանձինս և առ այլն որ ասելոց են՝ գործիցէք։ Խոկ եթէ ի բաց թքանիցէք և ընկենուցուք ի մտաց, ասլա և մեք առ մնացորդսն ևս գանդաղագոյնս լինիցիմք։ քանզի և ոչ երկրի որ զսերմնն ապականից՝ մտադիւր մշակն դարման տանիցի։ Վասն որոյ աղաչեմ զայս ստէպ ածել ընդ միտս։ քանզի յայսպիսի հոգոց մեծամեծ և կեցուցիչ (փրկարար) բարութիւնք ոգւոցն ծնանին, և Սստուծոյ խոկ հաճոյ կարեմք լինել, յորժամ զայս ստէպ ըզմտաւ ածիցեմք։ և ի թշնամանաց և ի բամբասանաց և ի խուռնիսութենէ սրբին բերանք, յորժամ ընդ հոգեւոր բանս ընդելնուցումք, և դիւաց ահագինք երեւեսցուք, եթէ վառիցեմք զլեզուս մեր այսպիսի բանիւք, և զԱստուծոյ շնորհան ի մեզ կորպեսցուք, և քաջատես և սուրակն լինիցիմք։ Քանզի և աչս և բերան և լսելիս վասն այնորիկ ետ մեզ Սստուած, զի բնաւին ամենայն անդամքն նմա ծառայեսցեն, զի զնորայսն խօսեսցուք, և զնորինսն արացուք, զի հանապազ օրհնութիւնս երգեսցուք նմա, զի գոհութիւնս առաքեսցուք, և այնու ամենայնիւ պարզեսցուք զիմիղն ի մտաց։ Զոր օրինակ մարմայ ի սուրբը օդ վայելեալ՝ առողջագոյն լինի, նոյնպէս և ո-

գին զգաստագոյն , յորժամ այսպիսի զրօսանօք բուծանիցի : Չտեսանե՞ս և զմարմնոց իսկ զաչս . յորժամ հանապաղ ընդ ծուխ գայցեն , արտօոր թերեն . և յորժամ ի խաղաղ օդս և ի մարդս և յաղբեւրս և ի դրախտս զրօսնուցաւն՝ առողջագոյնք և քաջատեսք : Նոյնպէս և մտացն ակն եթէ յեղտիւրս հոգեւոր բանիցն ճարակիցի , սուրբ , յստակ և քաջատես լինի . իսկ եթէ ընդ ծուխ ինչ աշխարհի իրացս գայցէ , բժաբեր արտօսրալից լինիցի , և զազգի ազգի լալիւնս լայցէ եւ աստ եւ անդ : Քանզի ծխոյ իսկ նման են ամենայն իրք մարդկորէնք , վասն որոյ և ոմն ուրեմն ասէր . «Պակասեցին իրեւ զծուխ աւուրք իմ : » Նա զկարձն և զանկայ ժամանակն ողբայր . բայց ես ոչ միայն առ այն ասեմ , այլ և ի խոռվութեան ինչ իրս պատշաճ համարիմ առնու լ զասացեալսն :

Զիք ինչ որ այնպէս տրմեցուցանէ զակն ոգւոցն և պղտորէ , որպէս աշխարհական հոգոց բազմութիւնք , և չարեաց ցանկութեանց յաճախութիւնք , քանզի այնպիսի փայտի է ծուխըն : Դոյնպէս և հուր , յորժամ զգէջ և զդալար անտառօք վառիցի , ծուխ յօլովէ . նոյնպէս և ցանկութիւնն յայնժամ սատափի մրրիկի , յորժամ ի դէջ և ի լցծ ոգիսն բորբոքիցի . քանզի և նա յաճախ ծնանի զծուխն : Վասն այսորիկ ստէլ սկէտք են հոգեւոր ցօղյն և խաղաղ օգոց , զի զհուրն չիջուցանիցէ , և զծուխն պարզիցէ , և թռչուն զմիտսն գործիցէ : Քանզի չէ և չիք իսկ հնար այնչափ չարեօք ծանրանալ , և ընդ երկինս թռչել . այլ պարտ և պատշաճ է զմէջս պնդել , ժրանալ , հատանի և անցանել զայն ճանապարհս . մանաւանդ թէ և այնպէս չէ հնար , եթէ ոչ զհոգւոյն թեւս ստանայցեմք : Իսկ եթէ մըտաց երագութեան և հոգեւոր չնորհաց պէտք իցեն ելանելոյ յայնպիսի բարձունս , յորժամ ոչ այնպիսի ինչ իցէ , այլ ամենայն հակառակ և ստանայցական ծանրութիւնն , ո՞չ ապաքէն ի խոնարհ սողիցիմք . զիա՞րդ կարիցիմք ի վեր թռանել , ուր այնչափ ծանրութիւն ի վայր ձգիցէ : Եթէ ոք յարդար կըխս առնոյր զմեր բանս կըռել , ի բեր տաղանդս (չափ , կըիր) աշխարհական բանից հազիւ թէ գտանէր հարիւր դահեկան (չափ , կըիր) զհոգեւոր բանիցն , մանաւանդ թէ ոչ տասն դանդ :

Եւ արդ չիցէ ամօթ և յետին ծաղր՝ ծառայ ստանալ , և

բազում պէտս կարեւորս վճարել նովաւ , և բերան ունել՝ և
ոչ իրբեւ ծառայիւն վճարել նովաւ պէտս ինչ , որ և հաստա-
տեալ իսկ կայ ի մերում տնդամս , այլ յետս ընդդէմ . զի յանօ-
գուտ և յանպատշաճ իրս վարեմք : Եւ երանի թէ յանօգուտ
միայն . նա աւանիկ զնորին հակառակն , և ի վնասակարս եւս՝
որ բնաւ չիցէ մեզ պիտոյ . և եթէ զմեր պիտոյսն խօսէաք ,
ապա և Աստուծոյ սիրելի էին բանքն : Նա աւանիկ զոր ինչ
սատանայ դրդէ , զայն խօսիմք . մերթ ծիծաղիմք , մերթ խեղ-
կատակեմք , մերթ անիծանեմք և թշնամանեմք , մերթ երդ-
նումք և ատեմք , մերթ հայհոյեմք , մերթ շաղփաղիեմք , և
եւս չար քան զպառաւունս՝ զպանցելոց բանս խօսիմք . որ
ինչ չէ մեզ հարկ՝ զայնափսի ճառս ի մէջ բերեմք : Աղէ , ասա .
՞ ոք ի ձէնջ որ այժմ ասու իցէք՝ պահանջիցի ասզմս մի ա-
սել , և կարիցէ ասել , և կամ սակաւ ինչ բանս յաստուածե-
ղէն գրոց : Զիք ոք , չիք ուրեք . և ոչ այն միայն չարիք են ,
այլ զի և առ հոգեւորսն ծուլացեալք , և առ սատանայտկանսն
իրբեւ զհուր սառտկագոյնք : Եւ եթէ կամիցի ոք հարցանել
զծեզ զդիւական երգոց և զբողիցն խեցբեկ նուադացն , զրա-
զումս գտանէ զի զայնս հաւաստեաւ գիտեն , և բազում յօ-
ժարութեամք պատմեն :

Այլ տես , զինչ պատճառս ի մէջ բերեն , յորժամ մեղադիր
ոք լինիցի : Զեմ , ասէ , վանական , այլ կին ունիմ և որդիս ,
և տան հոգամ : Եւ այն իսկ է որ զբնաւ եղծանէ , յորժամ
նոցա միայն պատշաճ համարիցիք զաստուածեղէն գրոց ըն-
թերցուածս : Զեզ աւելի պիտոյ է քան նոցա , իրբեւ զբաղե-
լոց , և հանասլազ վէրս յանձինս տռելոց . այնպիսեացն պիտոյ
է դեղն : Որպէս զի քան զչգիսելն , աւելորդ զիրսն համարել
կարի չար է . սատանայտկան մտաց են այնալիսի բանք : Զլի-
ցէք Պաւզոսի որ ասէ՝ եթէ Այս ամենայն ի խրատ գրեցաւ :
Բանզի եթէ աւետարան հասանիցէ ի ձեռս առնուլ , անլուայ
ձեռօք չկամիս հուալ լինել . և որ ի ներքս աղոտեղութիւնքն
մթերեալ կան՝ զայն չհամարիս ինչ կարեւորս : Վասն այսորիկ
ամենայն ինչ վեր ի վայր հարեալ եղծաւ : Եթէ կամիս ուսու-
նել զշահս գրոց , զքո իսկ անձնդ հարց . զի՞նչ յայնժամ լինի-
ցիս յորժամ սաղմուիցն լսիցես , և զի՞նչ յայնժամ՝ յորժամ սա-

տանայական երգոցն . որպիսի՞ ոք յորժամ յեկեղեցւոջ կոյցես , և որպիսի՞ ինչ՝ յորժամ ի թատերսն նոտիցիս . և ապա տեսանիցես եթէ բազում կրծիմ ի միջի ընդ այս և ընդ այն ոգի կայ , թէաէտ մի իցեն , վասն այսորիկ ասէր Պաւղոս՝ թէ «Ապականեն զրարս քազցունս խօսք չարք :

Վասն այնորիկ յաճախ պէտք են մեզ հոգեւոր թովշութեանցն , զի այնու իսկ գլեմք (գերազանցել) քան զանասունս և այլովքն կարի իսկ նուազագոյն եմք քան զնոսա : Այնէ կերակուր ոգւոցն , նոյն նորին զարդ . ապա ուրեմն չլսելն սովէ և ապականութիւն : «Տաց , ասէ , նոցա ոչ սովէ հացի և ոչ ծարսւ ջրոց , այլ սովէ լսելոյ զանն Տեառն , Զի՞նչ չուառութիւն քան զայն մեծ կայցէ , յորժամ զոր Աստուած ի տանջանաց կարգի սալառնայցէ՝ դու զայն քեզէն անձամբ ի գլուխ կուտիցես . զշար սովին և զալականիչ յոգիսդ կորզիցես , և քան զամենեսեան ախտացեալ գործիցես : Քանզի ի բանիցն ապականել և կեալ պատշաճեցաւ . Զի եւ ի ցատումն անչափ գրգռէ (բանն , խօսքը ,) եւ ի հանդարտութիւն ածէ . նոյն իսկ գարճեալ եւ յուութեանց զցանկութիւնան բորբոքէ , եւ ի զգաստութիւն ածէ որ համովն սլարկեշուութեամբ իցէ : Եթէ լոկ բանն այնպիսի զօրութիւն ունի , դու զիսմրդ իցէ զի զգրոց բանսն արհամարհիցես : Եթէ խրատքն այնչափ ինչ վճարեն , ո՞չչափ եւս առաւել յորժամ հոգւովին հանդերձ խրատքն : Քան զնուր եւս առաւել զլսատացեալ ոգիսն կակղիցէ , և պատրաստագոյն ըզգուշանալոյ յամենայն չարեաց կալոդիցէ բանն , որ յաստուածեզէն գրոց հնչիցէ :

Այսաէս կորինթացիսն հպարտացեալս առաւել Պաւղոս ցածուցանէր և հանդարտագոյնս գործէր . զի որովք պատկառելն և ակնած ել պարտ էր , նովիմբք մեծ ամտեալ մեծարանէին . այլ յորժամ զթուղթն ընկալան , լուր զդարձէն նոցա զոր ինքնին վարդապետն վկայէ զնոցանէն : «Զի ըստ Աստուծոյ տրտմութիւնն ձեր , ասէ , ո՞րչափ ինչ փոյթ գործեաց ի ձեզ , նոյնպէս և մեք զծառայու և զորդիս և զկանայս , և զբարեկամն նուածեցուք , և զթշնամիս բարեկամն արասցուք . զի այսովէս և աւագ որեարն Աստուծոյ բարեկամք և մտերիմք լինէին : Եւ Դաւիթ յետ մեղացն իսկ , քանզի պատրամօքն վայելեաց ,

ի բարւոք աստաշխարութիւն եկն . և առաքեալքն նոյնպէս եզ-
ղեն՝ որպէս ինչ եղենն , և զամենայն տիեզերու գրաւեցին :

և զի՞նչ օգուտ իցէ , տան , յորժամ լիցէ ոք , և չըն-
դունիցի զբանն : Զառնի սակաւ շահ ի լսելոյն . քանզի զանձն
սագտանէ և զոփայ , և թերեւու երրեմն և յառնելն իսկ գոյ-
ցէ : Իսկ որ ոչ և զայն գիտաց եթէ մեզաւ , ե՞րբ մեկնիցի (ի)՝
յանցանաց , ե՞րբ սագտանիցէ զանձն : Մի այսուհետեւ արհա-
մարհեցուք զունկնդրութիւն աստուածեղէն գրոց . քանզի
սատանայական մտաց է այն , որ ոչ տայ հայել մեզ ի գանձն ,
զի մի՛ և զգործսն յունկնդրութենէն տեսանիցէ ի մեզ գործեալ :

Եւ արդ , իմացեալ զայսպիսի արուեստ նորա , յամենայն
կողմանց ամրացուք , զի այսովիսի զինուք վառեալք մեք չան-
կանիցիմք ի բուռն , և զնորա գլուխն հատանիցիմք . և այն-
պէս զառաքինութեանն յաղթութիւնու ի գլուխս տռեալ , և
հանդերձելոց բարութեանցն հասանիցեմք .¹⁰

(Մարտունյէ յառաջ)

Ա. Մ. Գ.

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ՎԵՐՁԻՆ ԹԻՒԻ ՃԱՇԱԿԻ ԱՄԻՆ ԱՆՑԵԼՈՅ

(Ճաշ. Բ. տարի, Էջ 171-176)

Զայս յայտ առնեն և բանոք որ յիշին ի պատմութեան ,
սահմանեալք վասն մահապարտաց : Անհնարին բանտ էր վասն
չարագործաց վիրապն Արտաշատ քաղաքի , զոր ահեղ իմն ըն-
ծայեցուցանէ մատենագիր գրոցն Աղաթանգեղոսի . « Հրաման
տոյր (Տրդատ) կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ
պարանոցաւ խաղացուցանել զնա (զԳրիգոր) յԱյրարատ գտւառ ,
և տալ զնա ի գլեւակ բերդին Արտաշատ քաղաքին , և իջու-
ցանել ի վիրապն ներքին » (Աղաթ. ԺԱ.): Եթէ արժան իցէ
հաւատալ Աղաթանգեղոսի , վիրապն ոչ միայն « անհնարին էր
խորութեամբ , » այլ և էր բնակութիւն տհագին օճից : Իրեւ
պատմէր իսուրովիտուխտ զուեսին որ հրամայէր նմա հանել ըդ-

Գրիգոր ի վիրապէն ; « մարդիկն , » ասէ , « որ լուան , » կամի տուել , « աւագանին որ սովոր էին կալ յարքունիսն առ թագաւորին , սկսան ծիծաղել զբանիւն , և ասեն . Եւ դժու ուրեմն մոլեգնեցար , դեւ ուրեմն հարաւ ի քեզ . այս հնգետասան ամ է զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն , և դու ասես եթէ կենդանի է . արդ և ոսկրոտին խակ ուր իցէ , զի նոյն օրին իբրեւ իջուցին զնա անդր , յօձիցն իսկ տեսլենէ նոյն ժամայն սատակեալ իցէ » (Ագաթ . ի.) : Ագաթանդեղոս տայ նմին խակ Գրիգորի յիշել զահաւորութիւն այնր օձարնակ տեղւոյն , ուր որպէս թէ սքանչելեօք իմն պահեցաւ նա կենդանի : « Իսկ վասն իմ , գու խակ գիտես , » ասէ նա ցըրդատ , « զի հնգետասան ամ կայի ես ի խաւարչուտ ի խոր յանհնարին վիրապին . ի մէջ օձիցն էր բնակութիւն իմ » (Ագաթ . իԱ.) . և այլուր (անդ) ասէ . « Կեցցէ՝ արդեւք միօրեայ մարդ յանհնարին ի խոր վիրապի անդ յայնմիկ , յորում թաղեալն կայի ես ի մէջ օձիցն իբրեւ ի չեղին , և եռային զմարմնովք իմովք , պատեալ կային չուրջ զինեւ , և կայտային զանդամովք իմովք : » Յայտնի իսկ է թէ վիպատանութիւն ունի մասն մեծ ի նկարագրի աստ , որոց կէտ նպատակին է ստուարացուցանել զկարծական հնգետասանամեայ բնակութեանն ահաւորութիւն , որպէս զի կալն և մնալ Գրիգորի ողջ յայնալիսում տեղովջ և այնչափ ժամանակ՝ ընծայեցի պահստանութեան ամենախնամ զօրութեան : Իբրեւ պատմութիւն , այսչափ ինչ միայն ստոյգ է ստկայն թէ բերդն Արտաշատու էր բանտ մահապարտաց , թերեւս ունէր և ներքին իմն ստորերկրեայ մասն վասն ոճրագործաց : Նոյն ինքն Ագաթանդեղոս յիշէ այլուր դահճապետ և տուանձինն տեղի կատարիման . « Ելեալ դահճապետն պարծելով չարա-մահ առնել , ետ հանել զնոսա (զՊայիխանէ և զընկերսնորա) չըլ-թայիւք ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ , ընդ կողմի պոլուտային որ հանէր ի Մեծամօրի կամուրջն , ի տեղին յայն ուր սովոր էին սովանանել զամենայն մահապարտա » (Ագաթ . ԺԹ.) : Բուզանդ եւս յիշէ « գահճապետ , » և , « տեղի կաւափելոյ » մօտ ի Շահապիխան , բանակատեղին թագաւորաց , թերեւս վասն յանցաւոր զինուորաց : Անդ դլասաեցաւ Գնէլ : « Բուռն հարեալք ընկենուին յերիվարէ անտի զպատանեակն Գնէլ , և

ձեւն յետու կապէին զնա , և առեալ գնային ի տեղի կառափեւ-
լոյն : Մինչդեռ Ներսէս բանս ողոքոյ ընդ թագաւորին խօսէր ,
գայր արտաքուստ դաշնապէտն Երաղմակ , մատնէր ի խորանն
արքունի . սկսանէր պատմել . Ի գլուխ հանի , կատարեցի , ա-
սէ , զամենայն հրամանն արքունի . առի գնացի գֆնէլ , տա-
րայ մինչեւ յորմ Սիւսին , սպանի և անդէն թաղեցի » (Բուզ .
Դ. Ժ.) :

Օրինակ պատմելոյ զյանցաւորս , որպէս արդէն իսկ ասս-
ցաւ , էր արդարեւ բարբարոսական ըստ ոգւոյ ժամանակին որ
զպատիժն համարէր վրէ ժխնդրութիւն մանաւանդ քան ուղ-
ղութիւն , և զանագորունութիւնն ընդգէմ յանցաւորաց՝ իրեւ
իրաւանց մասն : Բայց և այնպէս յետին անագորոյն տանջանաց
օրինակք յանուն պատժական իշխանութեան կարի սակաւ են
ի մերում պատմութեան , և այն սակաւք եւս որ պատմին՝ են
կամ հանճարեալ և կամ թելադրեալ : Այսպէս սյն քստմնելի
և նորագիւտ տանջանք զորս Ագաթանգեղոս պատմէ տուեալ
ի Տրդատայ Լուսաւորչին և Հոփիսիմեսանց՝ են վկայաբանական
գիւտ : Յետ շարելոյ իբր երկոտասան ազգս տանջանաց մին
քան գմեւսն քստմնելի , որոց վերջինն էր հեղլով կապար հալ-
եալ , « Ճերմ մինչդեռ էր իրեւ զջուր , » այրել « զմարմինս
նորա առ հասարակ , » յաւելու . « Եւ ոչ մեռաւ , այլ կայր մեծ
ուժով , և զինչ հարցանէին՝ վարդվաղակի տայրը պատասխանի » (Ագաթ . Ժ.) : Հատանեն զլեզուն Հոփիսիմեայ , և պրկելով ի
չորս շիցս՝ կանթեզօք վառելովք խորովին զմարմին նորա
« ցմեծ ժամն . » յետոյ վարելով քարինս ի գող նորա՝ ի դուրս
վայթեն զաղիսն , ապա փորեն զաշս նորա , « Եւ դեռ եւս , »
ասէ , « կենդանի կայր » (Ագաթ . ԺԲ.) : Նոյնպէս զգայիա-
նեանսն պրկեալ մէն մի ի չորս շիցս՝ ծակեն զմորթ նոցա ի
պճզանցն , և գնելով փող և փշելով՝ կենդանւոյն մորթեն ըզ-
նոսա մինչեւ ի ստինսն : Ապա հանեն զլեզուս նոցա ընդ-
րակսն , և ի դուրս վայթեն զիկորոտիսն . բայց , զարմանք ,
« դեռ եւս , » ասէ պատմիչն , « կայրին կենդանի » (Ագաթ . ԺԲ.) :
Արդարեւ աւելաբանութիւն անչափ , ծշմարիտ պատմութիւնն
է սակայն հալածելն Սահակայ չարաչար տանջանօք զանուա-
նեալ հերետիկոսն Բարբարիանոս՝ ըստ Կորեան , Բորբորիտոնն՝

ըստ Սորենացւոյն (Խոր. Գ. Ծէ.) սակայն, որպէս յայտնի է ի թղթոյն Ատտիկոսի առ Սահակ ըստ Սորենացւոյն, ոյս եղեւ ի թելադրութենէ պատրիարքին Կոստանդնուպոլսոյ ։ Սորենացին, յետ պատմելոյ եթէ սուրբն Սահակ « հրամայէ (Մեսրոպայ) քննել զժանաագործ Բորբորիտոնսն, և եթէ ոչ հեզութեամբ և ոչ սաստիւ գայցեն յուղլութիւն, չարչարանօք հալածել, » յաւելու . « Զի թշնամանօք ի թշնամանաց վրէժ առնուցուն, և խայտառակեցի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց : Թէ ոյք էին անուանեալ Բորբորիտոնքն և որպիսի ինչ աղանդ նոցա, չէ ստուգիւ յայտ . թերեւս էին գնոսդինեան իրիք աղանդոյ մեացորդք : Զարմանալի է սակայն վճիռ քրիստոնեայ վարդապետին մերոյ, որ խակ ոգւով քրիստոնէութեան հինգերորդ դարուն, դատի օրինաւոր, զորս քան զմեզ այլազգ խորհիցին ի կրօնականս՝ հալածել աշխարհական բազկաւ , և հալածել ցմահ :

Իսկ որ ինչ վասն քաղաքական յանցաւորաց է, մորթել զայնալիսիսն կենդանւոյն՝ էր Պարսից սովորութիւն, զաշս խարել՝ Պարսից և Յունաց, մանաւանդ առ Բուզանդեան կայսերօք, որպէս և զիին և զորդիս փողոտել առաջի աչաց հօրն : Սակայն զալատամբան անձեւտ առնել, այն է ջնջել ընտանեօք, սովորութիւն էր առ Հայս : Մերթ զարուս և զէքս միանգամայն : Այսպէս զլՄանաւագեանց և զմրդունւոց ասէ Բուզանդ՝ եթէ Վաչէ սպարապեւտ Խոսրովու « Զարկանէր վանէր զազգսն երկուսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմայն զործ կորիւն և ոչ զմի » (Բուզ. Գ. Գ.) իսկ տոհմն Բզնունեաց, նայնպէս առ Խոսրովաւ, եղեւ ազգատ . « Ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կզզին (Աղթամար) առհասարակ ոչ զէք թողոյր և ոչ զարու » (Բուզ. Գ. Բ.) : Նոյնպիսի ինչ անգթութիւն գործ կործեցան Արծրունեաց և Ռշտունեաց, որ, ըստ Բուզանդայ, կոսորեցան ի քսութենէ Հայր մարդպետին առ Տիրանաւ . « Բառնային ի միջոյ (զազգսն) » ասէ Բուզանդ, « առանց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և զէքսն կոտորեցին զազգացն » (Բուզ. Գ. Ժ.Բ.) : Որպէս և Արշակ, ըստ նմին Բուզանդայ, « զտոհման կամսարականացն առնէր ազգատ » (Բուզ. Դ.Բ.) : Մի ան-

դտմ և եթ՝ գտանեմք զորդի փողոտեալ առաջի հօր դատելոյ վեասակար։ Այսպէս Մանուէլ սպարապետ արար Բատոյ Սահառունոյ, որոյ տուեալ էր սպանանել քսութեամբ զՄուշեղ զեղբայր Մանուէլի. «Եւ զբատն, արքային Վարազդատոյ ըզքուն, զսպանովն Մուշեղի, կալան իւր որդւովն առաջի սպարապետին Մանուէլի . . . և մեծաւ դատաստանօք դատեցաւ զանօրէնն Բատ սպարապետն Մանուէլ. նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ գլխատել» (Բուզ. Ե. Ա.): Բայց այս էր զործ առանձին վրէժինդրութեան Մանուէլի։ Մորթել, որպէս ասացաք, էր սովորութիւն Պարսից, որպէս առէ Բուզանդ զՇապէոյ՝ թէ «Հստ պարսկի օրինակին հրամայէր զմորթն ի բաց հանել, և խոտով լնուլ և ի հրամարակի իւրում ի տեսիլ ծանականոց կանգնել հրամայէր» (Բուզ. Գ. ԻԳ.): Արդարիեւ Բուզանդ պատմէ ուրեք եթէ Մուշեղ, յետ վանելոյ զՊարսիկս ի գալստեան Պասայ ի Հայս, խորովէր զՄազդեցունս, և զբազումն ի Պարսից մորթէր և կանգնէր ի վերայ պարսպաց։ այլ զայս ամենայն գործէր Մուշեղ ընդ հենգն իմն կրակապաշտութեան և ի վրէժ մահուն հօր իւրոյ Վասակայ, զոր Շապուհ սպանեալ էր մորթապերծ մահուամբ։ «Իսկ Մուշեղ զօրավարն Հայաստանեայց շրջէր ընդ երկիրն և աւերէր զատրուշանս Մազդեզանցն. իսկ զՄազդեզունս որ միանգամ ի բուռն արկան՝ զամենեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովէլ, և զբազում պատուաւոր տեարո որ պատուականք էին առաջի թագւառին Պարսից՝ ունէր ձերբակալս, և տայր մորթել և լնուլ խոտով և կանգնել ի վերայ պարսպացն։» «Ընդ բազում տեղիս,» յաւելու Բուզանդ, «զայս առնէր (Մուշեղ) ի վրէժըս հօրն իւրոյ Վասակայ» (Բուզ. Ե. Ա.): Ունիմք օրինակ անսովոր միանգամայն անադորոյն պատմոյ ի սպանման Երանական, գրադարձագի, եղբօր Երուանդայ, և զոր սպան Սմբատ, սպարապետ Արտաշամի, կապելով երկանաքար ընդ պարանցն, և ընկեննով ի գրդանս Սխուրեան գետոյ։ «Զկնի այսորիկ հրաման տայ (Արտաշէս) Սմբատայ Երթաւալ յամւրեն Բագարան, որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Սխուրեան գետոյ, զի սպանցէ զերուազ եղբայր Երուանդայ, զոր կալեալ Սմբատայ՝ երկան

զուլանէ հրամայէ կապել, և ընկենուլ ի պայտ մի գետոյն» (Խոր. Բ. Խ. Ռ.)։ Քան զայս անագորոյն էր օրինակ սպանման Հայր մարդպետին, որոյ չարաշար թշնամանեալ էր զՓառանձեմ տիկին, զմայրն Պապայ, ի բերդին Սրտագերից։ «Ապա պատմեցաւ թագաւորին Պապայ, յաղագս օրերացն (անէծք, հայհոյանք) զոր եղ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մօր թագաւորին, թշնամանս ձաղանաց ի բերդպարդել պաշտմանն, զի իբրեւ զրոգ մի, այնպէս թշնամանեաց զնա ի ժամանակի իբրեւ եմուտ անդր գաղտուկ, և ետ անարգանս տիկնոջն, և եկն ել անտի և փախեաւ. ետուն զայս ամենայն զրոյց թագաւորին։ Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ ըթէր յերկրին Տարօնոյ, և Մուշել սպարապետն Հայոց էր ի նմին գաւառի յիւրում բերդին որում Ողական կոչեն, որ կայ ի վերայ գետոյն Եփրամայ, եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Մուշել. և ունէր առ նա հրովարտակ. և գրեալ էր ի հրովարտակի անդ հրաման առ նա, զի չարամահ սատակեցէ զՀայր մարդպետն։ Եւ նո զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնայր. յզէր առ մարդպետն Հայր զաւով. և մեծարանաց պատճառանաւ առ ինքն կոչէր յԱղականն. և էին աւուրք ձմերայնոյ և սասակացեալ կցեալ էր դեան փրատ։ Ապա կոչեալ եղեւ առ նո Հայր մարդպետն իբրեւ ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ ի բերդն յԱղական։ Ետ հրաման զօրավարն և ու չեղ զօրականացն ունել զւա, և մերկանալ իբրեւ ի մօրէ, և կասել զձեռս նորա ի երքոյ ծնկաց նորա, և իջուցանել զնա ի գեան, և գնել ի վերայ սառինն կցեայ գետոյն, և սատակեցաւ անդէն։ Եւ եղեւ ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուզիւլ գլխոյն ի ցրտոյն վայրեալ ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթո նորա» (Բուլ. Ե. Գ.)։ Սակայն, որպէս ասացաք, այսպիսի օրինակք անօսր են ի պատմութեան մերում։

Այսջափ ինչ եւեթ գիտեմք զբանական վարչութենէ առ հասարակ։ Սակայն չէ պարտ մոռանալ եթէ, յետ դարձին Հայոց ի քրիստոնէութիւն, յորժամ որ ինչ քրիստոնէական էր՝ սկսաւ փոխանակել զհեթանոսութեանն. եկեղեցին յոյր

ձեռն կատարէր փոփոխութիւնս այս՝ կալաւ ազդեցութիւն
մեծ մանաւանդ ի մասինս յայսմիկ վարչութեան։ Գիրն և
կանոնք ժողովոց եղեն ոչ հիմն միայն օրէնսդրութեան եր-
կրին, այլ և նոյն իսկ օրէնսդրութիւնն գլխովին։ Այս է
պատճառ զի չիք մեր ուրայն դատաստանագիրք մնացեալ
ի նախնեայ անտի։ Մատեան մի փոքր և աննշան այսու ա-
նուամբ յմբ։ գարէ անտի յանուն Միիթարայ Գօշի՝ ոչ այլ
ինչ է եթէ ոչ մեծաւ մասամբ քաղուածոյ ի սահմանագրու-
թեանց Գրոյն, առաքելական կանոնաց և եկեղեցական ժո-
ղովոց, և չարժէ իսկ դատաստանագիրն (code) անուն։ Առ
քրիստոնէութեամբ օրէնք երկրին էին, որպէս երբեմն յԵւ-
րոպա, կանոնական իրաւունք (droit canon.) և կանոնագիրն
էր դատաստանագիր։ Կարի իսկ հաւանութեան է թէ տունք
երիցանց էին տեղի դատաստանաց, և վերին առեան՝ եպիս-
կոպոսանոցք։ Զէ ստուգիւ յայտ, ուակայն թուի հաւանու-
թեան, եթէ եկեղեցին, գէմ կողմնակի իմն, ունէր և պատ-
ժական իշխանութիւն, այսինքն թելադրութեամբ նորա
տային պատիժք։ Դատաւորական իշխանութիւն պատրիար-
քաց Հայոց Կոստանդնուպոլսոյ, ոչ քաղաքայինն միայն, այլ
և պատժականն, տուեալ նոցա իրրեւ առանձինն չնորհ յօս-
մանեան Կայսերաց, համարելի է ոչ այնչափ նոր ինչ ձիր,
որչափ ճանաչումն իրաւանց վայելելոց ի վաղուց։ Զիսնդիրս
ամուսնութեան և պահպանութեան եկեղեցական կարգաց
ոչ դատել միայն, այլ և արգելուլ զզեղծումն նոցա հրամա-
նօք և սաստիք թոյլ տուեալ էր նոցա, նա մանաւանդ ծա-
նուցեալ ի տէրութենէ։ Անուը ինչ ի պարանոց ածեալ լի-
նել ի Պատրիարքարան, նաեւ գան ըմպել կամ լինել բան-
տարգել ստահակելոց կամ հեստելոց պատուիրանաց եկե-
ղեցւոյ, որպէս պահոց, չէր նոր ինչ և անընդել յառաջ քան
զիէս գար կամ աւելի եւս։ Դատել եկեղեցական օրինօք և ի
քրիստոնեայ դատաւորէ՝ էր առ նախնիս մեր իրրեւ մասն
հաւատոյ, մինչեւ որում և իցէ կարգադրութեան որ սմին
հակառակ էր՝ համարել « աղաւաղումն փառաց եկեղեցւոյ։ »
Մին և գլխաւորն յամբատանութեանց որ եղեն պատճառք
դժնդակ պատերազմին վարդանանց, և զորս ի մէջ բերէ ե-

զիշէ , էր առաքումն ի Հայս պարսիկ գատաւորի , որ դատելոց
էր ապաքէն պարսիկ և ոչ քրիստոնէական օրինօք . « Եւս
շարագոյն , ասէ , հինգերորդն (այսինքն հինգերորդ պատճառ
ամբաստանութեանցն .) քանզի որ հազարապետն էր աշխար-
հին՝ իրեւ զհայր վերակացու համարեալ էր աշխարհակա-
նացն և քրիստոնէիցն , գրգռեաց յարոյց (Վասակ) զամբաս-
տանութիւն ի վերայ նորա , և հանեալ զնա ի գործոյն՝ փո-
խանակ նորա պարսիկ ած յաշխարհն , և մեւս եւս մողպետ
(օրէնսդէտ պարսիկ՝) դատաւոր աշխարհին , զի գեկեղեցւոյն
փառան աղաւաղեցեն » (Եղիշ . Էջ 39 , 40) :

(Մարտացի յառաջ)

Ա. Մ. Գ.

ԳԻՏՆԱԿԱՆ

ՀՆԹԱՑՔ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

ԲՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ

Ի ՎԱՂՈՒՅ ԺԱՄԱՆԱԿԱՅ ԱՆՏԻ ՄԻՒԶԵԻ ՑԱԽՈՒՐՄ ՄԵՐ

Գ.

Ապաստան ի գիւտս այլոց գիտութեանց՝ բնախօսութիւն
յառաջ անդր ընթանայ արագ և պարզէ առաջի մարդոյ հո-
րիզոնս նորանորս հանապազ : Գործիք վիւսկեան գիտու-
թեան հասեալք ի կատարումն՝ ճշգութիւն իմն սքանչելի
ընծայեցուցանեն ի հետազօտութիւնս փորձոյ : Գործի ակ-
նագէտ (ophthalmoscope) տայ թոյլ դիտել որում զննիցէն՝
զամենայն որ ինչ անցանիցէ ի մասունս անդ աշաց ծածուկս
ամենեւին : Գործի սրտագիր (cardiograph) դրոշմէ որպէս
ի գրի զկարի զանիտուլ շարժմունս սրտի : Երակագիր (sphyg-
mograph) նշանակէ զբարախմունս չնչերակաց , մինչեւ ցու-
ցանել զագդեցութիւն զկարի դոյզն ոգեւոր յուղի՝ ի վերայ
ըլջանի արեան : Զայնագրուշմ գործի (phrenograph) կրկնէ

անդրէն ի լեզու գրաւոր զնրբագրյն փոփոխմունս ձայնի մարդոյ , և ի ձեռն պարզական իրիք կազմածոյ հնարին գըտանել զշափ արագութեան կամաց և զգած ման ընդ մէջ ջըղաց , արագութիւն՝ որ չէ առաւել քան զերեսուն մէդր ի միում բոպէի , իրեւ զջոդեկատացն : Զարիել որպէս կարակնաւ երեւոյթ մի անմասն ի նիւթոյ ըստ վեր ի վերոյ երեւման , որպիսի են կամք և զգածումն , զի՞նչ խորտակումն հնոց տեսոլեանց (idée) ի վեր քան զբնութիւն նկրտելոց ոչ գործիցէ :

Բնախօսութիւն ոչ ստոյգ համարի ինչ զոր մարթ իցէ յուցանել ճշգրտիւ : Արհամարհեալ զնկատութեամբք (theorie) և զկարծեօք (hypothèse) զիտոք եւեթ և զպնութիւն իրաց մանաչէ տեարս : Ի չնորհս մրցութեանց նորա՝ ուսումն բըժըշկութեան , որ եկաց ընդ երկար կարի իմն անստոյդ ի գիտութիւնս , և որ չէրն խելամուտ բայց սակաւոց եւեթ օրինաց ամենայնի զոր ճանաչէր , ապաստան է այժմ ի ծանօթութիւնս որ գամ քան զգամ առաւելուն ստուգութեամբք :

Խորագնին ուսումն բնախօսութեան ետ ի միտ առնուլ գիւրաւ զյօրինուած և զպատճառս երեւութից հիւանդութեան , որոց երբեմն չէր խելամտութիւն ամենեւին : Մարթեն այժմ կալ ի վերայ հաւաստեաւ՝ եթէ ընդէ՛ր այս նիշ գործի մարմնոյ ոչ գործիցէ , յորժամ գիտիցեն քաջ զհանգամանս պաշտաման նորա . որպէս որ կատարեալ խելամուտ տեղեւակ իցէ ազգի ազգի բազմապատիկ մասանց մենքենայի միոյ՝ անդէն վարդապակի ճանիցէ զպատճառս խանգարման նորա :

Ուսումն բժշկութեան փոխ առեւոլ ի բնախօսութենէ զազդոյ հնարս (méthode) հետազօտութեան նորա՝ բազում ինչ պարտի նմա տակաւին : Յազդեցութ ենէ նորա եղեւ ի մասնէ՝ զի ի բաց թողաւ ամենեւին անհանճար խաւնութիւն այլակերալ աննման գեղոց , որ համարեալ էր երբեմն ուրեմն ի գլխաւոր ճարտարանս արուեստի բուժելոյ , վասն որոյ առէր ամօք ինչ յառաջ արդիւնաբար (praticien) ոմն անուանի . «Տածութիւն դասական (thérapeutique classique) ոչ այլ ինչ է թէ ոչ կոյտ մի անհեղեղ ամենեւին և յետս ընդդէմ՝ ա-

մենայնի զոր ի մէջ ածին նկատութիւնք համօրէն ժամանակաց : »

Արդարեւ զիա՞րդ մարթիցի ցուցանել զազգեցութիւն խառնուածոյ իրիք պէսալէս նիւթոց , ուր դժուարին է ճաշել և զմիոյ խակ զառանձինն զհանգամանս . նա զի տեսանեմք դեղս դարմանոյ , որպէս ափիտնն է , պարզականս արտաքուստ , այլ յօդուածոյս արդեամիք ի նիւթոց ազգի ազգեաց , յորոց միոյ միոյ առանձինն հանգամանք են ամենեւին հակառակը միմեանց :

Յամենայն մատունս անդ ոչ սակաւս տակաւին , յորոց միջի յառաջադիմութիւն բնախօսութեան չէ բաւական լինել ուսնկաիւ բժշկական ճարտարարութեան , առաջնորդ արուեստիս այսորիկ չէ այլ ինչ բայց սովորութիւն եւեթ կոյր ամենեւին : « Բժշկութիւն փորձական զոր ձեզն ուսուցանել կամիմ , » ասէր արդ եւս Գլու Պէրնար , քաջանուն բնախօսն մեր , ցունկնդիրս իւր Քաղիական Վարժոցին , « չէ եկեալ զեռ վճռաւ ի պայման հաստատուն . այլ փոյթ մեծ զնմանէ ունին , և տեսանեն խակ զնա ծագել չողալ զհորիզոնաւ գիտութեան : Յետ քսան և երից դարսուց արդեանց (pratique) և ուսման ի վերայ տնցանելց , ճարտարարութիւն բժշկութեան չէ գիտակ անձին ցայսօր՝ եթէ իցէ և եթէ չիցէ : »

Ի սկզբան գարուս այսորիկ , հայակապն Պիչա , որ արար անուն մեծ յոյժ ի ժամանակի անդ , բողոք արկանիր զանատուգութենէ սկզբանց յորս յեցեալ կայր բժշկականն ճարտարարութիւն , և ասէր . « Անյօդ յօրինուած տեսլեան անյօդից՝ բժշկութիւն է թերեւս գիտութիւն յամենայն ի բնախօսական գիտութեանց որ ի յայտ ածիցէ զանհարթութիւնը մարդկեղէն մտաց : Եւ զի՞նչ ասեմ . այն չէ գիտութիւն վասն յօրինական մտաց . կոյտ մի է անձչգրիտ տեսլեանց , կոյտ զննութեանց անհեղեղս իմն ի մոտի նկարելոց և զօդելոց տաղտկալից օրինակաւ : »

Ի ժամանակէ անափ յօրում գրէր Պիչա , յառաջադիմութիւնք բնախօսութեան հասանէին տակաւ ի պայման այնպիսի , մինչեւ աւանդութիւն բժշկական հարեալ խրամատեալ յամենայն կողմունց՝ մնայր մերկ ի պաշտանութենէ

գիտնոց որ թուէին իմն ունել սպաս պաշտաման պահպանելոյ զնա :

« Խարիստրեցան հաւատոք որ ի փարդապետութիւնս , » ասէր արդ եւս ուսուցիչ ո՞ն Դալրոցի Պարիսացւոց քաքագին , բժիշկն էորէն . « զոր ինչ գիտենն հաստատութեամբ՝ դոյզն ինչ է առ այսու զոր խոստվան լինին չգիտել : Ոչ եւս մարթի լինել պաշտպան անցելոյն , և չէ խակ այն արժանի պաշտպանութեան . խախտեցաւ արուեստ բժշկութեան՝ դրդուեալ ի գիտութենէն որ երթայ և ծաղկէ : Ոչ երբեք այնչափ ինչ դոյզն եղեն հրամանք (dogme) և ոչ ուրեք գտին ընաւ այնպէս ջատագովութիւն չարաշար . անզօր է պաշտպանութիւն երկմտութեամբ , և հաւատոք սաստկացուցանեն զբախիւն հարուածոց առանց դադարելոյ : Որ ունիցի հաւատու ի բժշկութիւն գիտնական՝ լքեալ թողցէ ի բաց զաւանդութիւն դասական , և խնդրեսցէ ի ձեռն նորոգ իւրովին հնարից ստեղծանել բժշկութիւն նոր , որ ոչ եւս լիցի նմա արուեստ ինչ ի կարծս :

Եւ արդարեւ զի՞ առնել , զի՞ առնել , զի՞ ամագիտ լինել հիւանդութեանց , յորժամ բնախօսութիւն չցուցանիցէ մեզ ձշդիւ գտակաւ զյօրինուած նոյա և զպատճառս . կալ և մարտնչել ընդդէմ նշանաց հիւանդութեան՝ առ ի համելոյ զարդար նեղութութիւն հիւանդացելոյն : Այլ ո՞ ոչ իմանայ թէ այս տածումն անհանձար այնմ նման է , յորժամ գուն ոք գնիցէ սփոփել զցաւս զոր գործէ ի մարմնի տարր ինչ օտար՝ առանց զնա հանել անտի ջանալոյ : Հնարէր գոնեայ գիւր առնել ի ցաւոց , եւ այնու օգտակար ցաւածին լինել այլ և այն խակ չվճարի յաճախս : Արիւնհանութիւն (saignée) գիւրէ որոց ի թոքացաւէ տառապալիցին . այլ յաւելու մեծապէս զպատճառակար մահու : Դարձեալ , որպէս ասեն փորձ և կիրթ ախտախօսք (pathologiste) բազում են հիւանդութիւնք զոր թողուլ առանց գեղոյ չէ ինչ վկասակար (*) քան զտածութիւն այնպիսի յորտոմ ամենայն մթին է և անյայտ :

* « Ի մոի ունել պարտ է , » առէ Նիյեմյէր վասն թռքացաւի , « զի թողուլ զիւանդութիւնն ըստ ինքեան՝ հանապաղ իմն ոչ վրիպեցուցէ

Արդիւնարար ոք առնու անդէն ի միտ զօգտակարութիւն
հնարից, և զի չէ անդէտ թէ զիա՛րդ ի ձեռն զարգացմանց
բնախօսութեան, յընթացս ամաց ինչ, վեր ի վայր կործա-
նեցաւ ամենայն որ ինչ կարի հաստատունն թուէր, ոչ եւս
զմոացածին կարծիս համարի այնպիսին ընդ օրէնս: Աւուրբք
ինչ յառաջ, առ ի ցուցանել զօգտակարութիւն միջամուտն
լինելոյ բժշկի, ի դէպս թոքացաւի յօգուտ ի կիր արկանէին
զարիւնհանութիւն անխտիր, գիւտ ապաքէն դիւցազնա-
կան, յոր դիմեալ՝ յաճախէին զդէպս մահու մինչև ցքսան և
եւթն առ հարեւր: Այլ օր մի յատուրց դէպ լինէր ոմանց ի
բնախօս բժշկաց զմուաւ ածել՝ թէ ազդոյ իմն հայթայթանք
լիցեն առ ի բժշկութիւն արկանել զհիւանդն ի զօրութենէ.
փորձ փորձէին ի բնութիւն անդր լոկ առնել ապաստան ըզ-
գործ բժշկութեան թոքացաւի, և նուազէին դէպք մահու
ցեւթն առ հարեւր: Այլք ոմանք ի բժշկաց, յեւս առաւել
հմտից բնախօսութեան, ի միտ առնուին թէ օգուտ է հի-
ւանդացելոյն չիւափել յուժոյ, առ ի դէպ հիւանդութեանն
ունելոյ. պատուէր տային առնուլ դեղս զօրացուցիչ, մա-
նաւանդ զոգի դինոյ, և պակասէին դէպք մինչեւ ցերիս
առ հարեւր: * *

Ց. Գ.

(Մարդուացի յառաջ)

զբժշկութիւն ախտին, եթէ որք նովաւն վարակիցին՝ չիցեն անզօրք զօ-
րութեամբ, և ախտն եւս չդիպացից սաստիկ յցիք ի բնէ: Ոչ բազում ժա-
մանակ է զի խելամուաւ իրացն եղեն բժշկք, և ի ձեռն հնարից սպասման
(méthode expectante) Վիեննայ լինէր ուսումն այն կարեւոր՝ թէ քան
զախտ օձիկ, քան զադայիկ տիստ և զվարդ տիստ նուազագյոյն ինչ կարօտ
ինամածութեան բժշկի ին թոքացաւ և այլ եւս հիւանդութիւնն չիւրբեռչ յըն-
թաց՝ ի հարկանել զայնուիկ որ յառաջադպութեան էին, և կու-
տարեն զըրջան իւրեանց առանց իրիք խառնակութեան և մեծի ինչ ուժ-
գնութեան: Նա զի յայտ իսկ է թէ կարի միջամուտն լինել բժշկի գործէ
յաճախ ազդեցութիւն չար յընթացս հիւանդութեան: »

** Այս թիւք քաղեցան ի բազմապատիկ զնութեանց, զըրց զմանը
մասունա գտցէ ոք ի գիրս Ար հահէօք ուսումնաց բէլիւթիւն (leçon de cli-
niique médicale) Ժագուի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆՔ ԶՀԱՅ ԼԵԶՈՒԵ

Յետ աւուրց բազմաց անցանելոյ, հնգեքին բարեկամքն մեր եկին դարձեալ ի տուն մեր : Էր ընդ նոսա և այլ ոմն, միոյն ի նոցանէ բարեկամ, Յ. Շ. անուն : Նախ Ա. Պ. ոյր բարեկամ է Յ. Շ. միում միում ի մէնջ յանդիման առնէր զնա, եւ ապա սկիզբն լինէր բանից : Խւրաքանչիւր ոք խօսէր զիրաց իրաց որ պատահեալ էին յօրէ յորմէ հետէ մեկնեալ էին ի միմեանց : Ոմանք զոր տեսեալ կամ լուեալ էին չնաշխարհիկ ինչ ի թատերս, ի հանդէսս պարուց, ի խնճոյս երգոց նուագաց կամ ի կոչունս տօնից սիրելեաց, զայն պատմէին : Կէսքն լուրս զժաղաղոյ բարեկամաց ի մէջ ըերէին, զբանակցութենէ նոյա և զկարծեաց միոյ միոյ ի նոցանէ զքաղաղաքային գործոց, զգբանական տագնապէ աւուրն, զպատերազմէ կամ զխաղաղութենէ, այլովքն հանդերձ : Այլք պատմէին թէ ուրեք ուրեք ի պայքար մտեալ ընդ բարեկամն ոմանս վիճէին զգբական նիւթոց առ հասարակ, և երբեմն զմնառենագրութենէ ազգաց օտարաց, զոր օրինակ զԳերմանացւոց, զԳաղփացւոց և զայլոցն . սակայն զիմնդրոյ Հայերէն լեզուի որ այնչափ յուզեալ գզրդեաց զաշխարհ ի վերջ կոյս ամին անելոյ, ոչ զբերան անգամ բանացր ոք : Առեալ զթել բանիցն զոր յառաջին ճառան անդ թողեալ էր՝ սկսաւ խօսել Ս. Գ. օրինակ զայս :

Ս. Գ. — Յառաջնում ժողովի անդ մերում զբազում կարեւոր և շահաւետ իրաց խօսէաք ընդ բարեկամն մեր սիրելիս, և այնչափ սիլուն և յանկուցիչ նիւթքն էին, մինչեւ բռնի իմն մզել տանել զմեզ ի բացեաց ի նպատակէն զոր առաջի եղեալ էր մեր :

Յ. Շ. — Յանկալի է ինձ ուսանել զայն ամենայն որ կամ խագոյնն խօսեցաւ :

Յ. Պ. — Զէ դժուարին իրդ . կարես զայդ ամենայն ըն-

թեռնոււլ ի Հանդիսի անդ որ կոչի ձաշան սսկեղին բարեսնեա՞ն
Հայ լեզուի . սակայն պարտ է ինձ ասել քեզ թէ հակառակորդ-
քըն մեր առ հեծուկս՝ ձաշան սսկեղին բարեսնեա՞ն անուանեն
զայն . ո մեծի յաղթութեանն : Ոչ գիտեն անմիտքն թէ ի
թշնամանելն զմեղ՝ անձամբ զանձինս իւրեանց ծաղր կացու-
ցանեն և արժանի քամահանաց . քանզի որ ինչ անգինն է և
չքնաղ և միայն պատուական ի ստեղծուածս հայ հանճարոյ՝
զայն անարդեն թափեալ ուղեղքն : Արդարեւ ոչ եղին եր-
րեք հինքն ի Հայոց անուանիք յօրէնսդրութեան կամ ի յօ-
րինուածութեան քաղաքային կարգաց և վարչութեան , նա
եւ ոչ յարուեստի զինուորութեան . ոչ արժանի ինչ ածին
յարդիւնս ի պէս պէս շառաւիզս գիտութեանց . ոչ ի փիլիսո-
փայտ թեան եղին քաջանուն , ոչ ի պատմութեան երեւե-
լիք . բայց զոր ինչ թողին մեզ ի ժառանգութիւն , արժանի
փառաց , այն մատենագրութիւնն է Ե. դարուն եւ որ ի վեր
անդր քան զնոյն միջոց ժամանակի , այսինքն այն չնաշխար-
հիկ և սքանչելի լեզու յորոյ վերայ չեւ էր անցեալ չունչն
ասլականիչ մատենագրաց յետին կիսոյ Ե. դարուն և այսր .
լեզու որ արդարեւ հրաշակերտ իմմ է նուրբ իմացութեան և
բարձրագոյն հզօր հանճարոյ . լեզու առատ ընչաւէտ իրեւ
զարարերէնն և զյունարէն , դիւրակոր դիւրաժեք իրեւ
զանդզիւրէնն , եւ կանոնեալ , ծիշդ եւ սեղմ իրեւ զգա-
զիարէն : Զայս ասեմք զմատենագրաց որսց ոճ սեղմ է եւ
ամփոփ եւ միշտ միաբան հանգոյն կանոնաց դպրութեան :
Իսկ որ դիւրանականն կոչի՝ այնչափ շլացուցիչ , պաճուճեալ
եւ փայլուն՝ այն օրինակ չմարթի լինել առ ի նմանել : Ի
մատենանս որ զայս ոճ վարեն՝ գտն արդարեւ բազում անգին
մթերք և բիւրապատիկ տապազք ընտիր ընտիր բանից և
զարդարուն ձոխ սասացուածոց . սակայն շահս օգտի եւեթ-
պարտ է մեզ քաղելյայնցանէ եւ ոչ նմանել նոցա :

Ս. Գ. — Մի յաւելորդ բանս հատանիցիմք , բարեկամք .
այլ յառաջ մատուցուք զնիւթ ճառիս : Ասացի թէ կեռի
գտանիմք ի մերմէ նպատակէ . քանզի յառաջնում ժողովի
անդ կամ էր մեզ լսուել զայժմու մատենագրաց : Արդ սկիզ-
բըն արասացուք :

Մատենագիրք մերոյ ժամանակի յերկուս գունդս բաժանին :

Առաջին գունդն է այնոցիկ որ գրեն ի ռամիկ բարբառ կամ ի նոր հայերէն լեզու :

Երկրորդ գունդն է որոց մատենագրեն ի հին հայ բարբառ :

Ի գնդէ անտի առաջնոյ արասցուք սկիզբն : Ոչ կամիմ բերել ի համար զայնոսիկ որ գրեն թուղթս ընտանիս առ բարեկամս իւրեանց եւ կամ դրոշմեն ինչ ինչ յիւրեանց ուրոյն տոմարս ի պէտս առաջին գործոց յիւրեանց . սոքա զերծ են ի բանագատութենէ . քանզի տէր է իւրաքանչիւր ոք ի ներքս ի տան իւրում : Սակայն որոց գրենն ի լրագիրս , ի հանդէս , ի մատեանս յիւրեանց անուն գրոշմեն լս եւ կամ ի թարգմանութիւնս , չիք նոցա չափ եւ համար : Սկիզբն արարեալ յայնցանէ որ ընթեռնուլ միայն դիսեն եւ գրել զն եւ զԲ , մինչեւ ցայնոսիկ որ ընդելացեալ են և ելեալ հասեալ ի քաղցր ծանօթութիւն նարեկացւոյ ուրուք կամ կամբըրոնացւոյ կամ երդնկացւոյ եւ կամ այլոց խառնախօս եւ բարբարիկ մատենագրաց յետին դարուց՝ գրեն անխիզճ , անխըտիր , ստեղծանեն բազում ինչ ըստ քմաց յիւրեանց եւ ելանեն համարիձակագէմի հրոսարակ . յորմէ յայտ է թէ որչափ գանալից , չարագան խոցեալ իցէ Հայ լեզուն : Անուանին ե . գրեալ է ուրեք յերկրագնդի . Զաբէտացած հայ ճառց եւ Հայ վշաւ : Ես ասեմ . եթէ չափել պարտ իցէ զաստիճան իմացութեան ազգի միոյ ի բարբառոյն զոր տրկանէ նա ի կիր՝ որչափ լալ եւ հեծել պարտ իցէ ի վերայ տկարութեան մտաց ազգին Հայոց : Սակայն մեք ոչ հաւատամք այդմ . այլ ազգ են իրքն : Զէ մարթ , չէ հնար յերկմիսս լինել՝ թէ իմացութիւն եւ հանձար ազգի մերոյ աճէ եւ զարգանայ , եւ ըստ յառաջադէմն ընթանալոյ գիտութեանց և արուեստից՝ զգենու օր ըստ օրէ զօրութիւն նոր . սակայն հոգին այն ապօկանիչ եւ ամբարտաւան , որ անհետ արարեալ զճաշակ գրական ճարտարութեան նորա՝ ջախջախեալ է զդործին որ ի ձեռին նորա , չդադարէ ի զործելոյ զդժնդակ ազդմունս իւր մինչեւ ցայսօր :

Արդ՝ հարցանեմ զձեզ : Որ տգէտքն իցեն ոգւոյ և ձաշակի և ամենեւին անոտեղեակք կանոնաց և բազում այլ կարեւորագոյն հանգաւմանաց հին հայ բարբառոյն որոյ ծնունդ է ռամիկ լեզուն զոր արկանեն ի կիր՝ զո՞ր արդիւնս մարթիցեն ածել ի մէջ և կամ զի՞նչ ազգ պտղոց հանել կարասցեն ի վաճառ:

Ա. Պ. — Կարի դաւնահամ և կչիչ պտուզք :

Յ. Շ. — Դու ասես , բարեկամ , թէ ըստ յառաջադէմն դիմելոյ արուեստից և գիտութեանց զարգանան և միտք մերոցն , բարւոք է . սակայն վասն այնչափ անթիւ գիւտից և նոր տեսլեանց անուանք յայտարարք պիտոյ են . և յորժամ պակասեն անուանքք այդոքիկ ի հին լեզուի անդ , զի՞նչ պարտ իցէ առնել . միթէ թողուլ լքանե՞լ զնոր լեզուն և կապել բեւեսել զանձն ընդ հին բարբառն , որ թէպէտ զարմանալի , թէպէտ գեղեցիկ , սակայն հին է . չէ մարթ գհինն նոր գործել և զմոռայեալն ի բազում դարբուց հետէ կրկին դարձուցանել և պնդել հաստատել ի մտի միոյ ողջոյն ազգի :

Յ. Պ. — Թոյլ տուք ինձ տալ պատասխանի : — Գիտեմ՝ զպայքարն էք-բարեաց և աշխարհաբարեանց ակնարկին գու : Արդ գիտասչիր . սկզբունք մեր և օրէնք այս են : Որ գրելն կամին ի հին հայ բարբառ՝ պարտին գրել որպէս ինչ աւանդեալ են մեզ ընտիր և հոչչակաւոր մատենագիրք Ասկեզէն դարուն , և ոչ որպէս զոմանս ի նորոց որ ի մի խառնեալ զուսի և ըզտիզմ , զվարդ և գտատասկ , զիւրեանց երկս մոտացն ցնորելոց իբրեւ օրինակ առաջի եղեալ մանկուոյն՝ ծնուցանեն ի մտի նոցա ձիւալս անհնարինս , տեսիլս այլանդակս և կանոնս իմն ճամարտակ զրախօսութեանց : Արդ՝ այս չէ ասել թէ պարտ իցէ թողուլ կամ տարագիր առնել զնոր լեզուն . մեք զդորին հակառակն քորոզեցաք մինչեւ ցայժմ և բիւրապատիկս խակ կրկնեալ եմք , որպէս է տեսանել ի ձաշակի (Ա. Տարէ , Եր. 2. Տաղ. 12. — Բ. Տարէ , Եր. 49. Տաղ. 26. — Եր. 155. Տաղ. 54) : Բայց հակառակորդքն մեր զի՞նչ առնեն . զամենայն հնարս հնարին գնել մեզ դաւս և ծուզակս արկանել ընդ ոտիւք : Ուր ուրեք և իցէ , յորժամ չիցէ ոք ի մէջ առաջակայ , նստին և անհնարին պատիր բանիւք հաւանեցու-

ցանեն զտիսմարս՝ թէ ջնջել է դիտուորութիւն մեր զարդի հայերէն լեզու և փոխանակ նորս կանգնել հաստատել զհինն : Ասացից ձեզ ինչ մի որ յապուշ կրթելոց է զձեզ, և զոր առեմ՝ ճշգիւ հաստատելոց : Հոչակաւոր ուղեւորն ցնորական աշխարհի, Ե. որ ընդ օդս յածի և հանապաղի ի մէջ միգի և մրրկի թափառեալ շրջի, ասէ յերկրագնդի . Մշտական Մատուցած Գործաշաշտանն է մայս որ Հայոց հին լըլուսին յարսութեան համար հաւաագի ունի : Արդ՝ լոււարուք զի՞նչ ասէ բարեկամն մեր, Մ. Գարագաշեան : Դիտաւորութիւն մը չէ արդարեւ մէջ ինչ ին և հնարեւ+ անհետ առնել է մարդուագրութեան զարդի հայերէնն և նուշւ շառպարեւն հնայն մայս . . . ու այս ոչ յեւնհաս ինչ էմ և ոչ յանկացաւ : Զի՞նչ ասել պարտ իցէ կամ զի՞նչ կարծիս կարծել ըզմարդոյ որ զայչափի մեկնակ և զյայանի բանս ժափից կամս կորել, բայց թէ զրախօս և զրալարտիչ համարել պարտ իցէ և կամ առ յիմարս մոլեգինս ունել զայնպիսին : Այժմ զիարգ բանից դարձաւցանեմ առ բարեկամն մեր, Մ. Գ. որ ուներ խօսել զհատենագրաց որ գրեն յարդի հայ բարբառ :

Մ. Գ. — Յորդամ հատին բարեկամք մեր զբանս իմ ընդ մէջ, ասէի թէ չէ հնար բարւոք, ուզիւ և գեղեցիկս զրել ի նոր հայ լեզու՝ որոց քաջ տեղեակք ոչ իցեն հնայն : Զայս ձմբառաւթիւն բիւրսալարտիկ օրինակօք ցուցից ձեզ ի խոնարհագոյնս : Բայց չեւ մտեալ ի վնին ոզսրմ արգասեացն զոր տեսանեմք հանապալզօր յարդի մատենագրութեան՝ խօսել կամիմ զաստիճանէ գիտութեան նորսաց գրչաց, զգրական գտատիարակութենէ նոցա և զննապարծն կարծեաց զոր ունին զանձանց իւրեանց : Անդասին ի մտնկութենէ ուսեւալսկրունս ինչ արդի հայերէն լեզուի և թերեւու ինչ ինչ և զի՞նոյն, և յետոյ ուրեմն առանձինն վարեկեալ ի պէսպէս գրուածո իւրեանց սեպհակոն փորձոյ և հրահանգաց, սկսանին այնուհետեւ զանձինս առ հայրենագէտս ունել : Ոչ կամին ուսանել ինչ սերտիւ գտակաւ, ոչ յաւզել շարժել զիսրս լեզուին կամ բրել սեղել զհիմունն ուր նիստ առեալ հաստատեալ կայ չինուած նորա, պաշարք են նոցա լոկ՝ հարեւանցի ինչ գիտութիւն կանոնաց դարձութեան և արձակերասասնակ ազատութիւն . ստեղծանելոյ լոտ քմաց, ստեղծանելոյ յուպէտ

յանդէսս , ստեղծանելոյ և միշտ ստեղծանելոյ : Զայս ապերասան և անսանձ աղատութիւն առեալ ի ձեռին կամին թեքել կորացուցանել զլեզուն տու տմենայն ստեղծուածս քըմածինս իւրեանց մմթազգած , դոզդոզուն և խակ մտաց . չիք կանոն և ոչ օրէնք թէ մեծարեսցին : Նլանէ^o կնճիռն ինչ առաջի նոցա կամ դարձուած ինչ բանից դժուարին ուր ճարտարութեան պէտք իցեն և մեծի հմտութեան , անդէն առաթուր կոխեալ անարգին օրէնքն դպրութեան և խակոյն լոկով կամածին հրամանու , անուանք , բանք , վերադիրք և պէսպէս դարձուածք նոյն հետայն ստեղծանին ի վայրկեան ժամանակի : Առ իմէ^o տուայտել և ընդ քիրտն մտանել առի քննել և խուզել զայս ինչ կամ զայն ինչ օրէնս և զպայմանս լեզուին կամ կուլ և ընտրել ընդ լւան և ընդ յոսին , հուսկ լինել գերի բարւուք ճաշակի և հարազատ յօրինուածութեան լեզուին : Միթէ չիցէ^o իւրաշանչիւր ուրուք իշխանութիւն գրելոյ որպէս ինչ կամքն քմածինք և ցնորսք և միտք աղմը-կեսք թելադիր լինիցին նմա :

Գիտեմք զի աղատութիւն է ամենայն մատենադրի գրել ըստ իւրամք կարի եւ ըստ աստիճանի ծննդականութեան իւրոց մոտաց , եւ թէ չէ ոք սախովեալ զնոյն արահետ կոխել միշտ եւ զհետ երթալ ոճոյ որ նոյն եւ մի իցէ վասն ամենեցուն , անշարժ եւ անփոփոխ : Սրբար խոկ է եւ օրինաւոր՝ զի որոց յերկարագոյնս եւ քաջ քաջ որոճացեալ իցեն զօրէնս լեզուին եւ ստացեալ զկատարեալ գիտութիւն նորին՝ համարձակ իցէ նոցա արկանել զանբաւ գանձան նորա ի կիր՝ ի պէտս բազմածնունդ եւ եւանդուն համձարոյ իւրեամոց : Բայց այդ աղատութիւն պարտի կալ ամիսովեալ փակեալ ի շրջանի խիստ եւ անոչառ պահպանութեան կանոնաց եւ ոգւոյ լեզուին . եւ եթէ անցեալ ըստ այդ սահման արաւքս ոք ելանիցէ , չինի այնուհետեւ աղատութիւն , այլ ապերասանութիւն :

Այս աղատաման եւ յանդուգն արձտիերասանակ աղա-տութիւն արդի գրչաց , որ տոյ մեզ սկզբանի քատմնել , չմուի ինչ նոցա ծանր . կարի բնական , օրինաւոր , շահաւէտ նու և վայելուչ խակ է յաչս նոցա . չիք ոք որ ստգամանիցէ զնոսա վասն այդը , չիք որ պախարակէ , չիք որ խոչ ընդ ոտն ար-

կեալ գարձուցանիցէ ի կամակոր շաւղաց անտի եւ ածել մըտաբերիցէ յուղղութիւն։ Զնորին հակառակն՝ բազմապատիկ գովութեան արժանի զիրսն համարին . մեծարեն եւ դրուտեն զմիմեանս, քաջալերս տայ այր ընկերին, ծափս հարկանէ եւ կայթէ . մին անհնարինս գովէ եւ բարձրացուցանէ մինչեւ յամպս զընկեր իւր, զբարեկամ կամ զկուսակից համախորհ . քանզի եւ սա փոխարէն գովելոց է զնա, յորդամ հանցէ եւ նա չնչին ինչ վաճառ ի հրապարակ : Ահա, այսպէս վճարին իրք յարդի մատենագրութեան Հայոց : Զէ պարտ խնդրել անդ զսկզրունս և զօրէնս արդար անաշառ և ճշգրիտ բանադատութեան . ակնառութիւն եւ սուտակասպասն ողոքանք եւ մանաւանդ շահն կուսակցութեան որ օգուտ իսկ իւրաքանչիւր է՝ զրանադատութեան օրէնս ընծայեցուցանեն այժմ յազգի մերում, եւ չեն թափուր յարդեանց . քանզի նախ զիմաստնոյ կերպարանս տան մեզ, զմեծի եւ զփառաւորի, եւ երկրորդ անգամ՝ բաւական են ի պատրել զկէս ի կէս ուսեալսն եւ մանաւանդ զանուտումն մարդիկ որ ընդ այն սովոր են առաւել զարմանալ զոր ոչ կարեն առնուլ ի միտ : Եւ այլ իմն զարմանալի այն է՝ զի որ զառաջինն ձեռնամուխ լիեալ էին յանարժան գործ աւերածոյ եւ խանգարման լեզուին, կարի իմաստուն համարին յաչս բազմաց, խորաքնինք եւ անհնարին հմուտք օրինաց լեզուին : Որոց ներկ ինչ թեթեւ է եւ հոտ լոկ հայերենի՝ զանուն հայերենագիտի վայելն : Ես ճանաչեմ զոմանս յայդպիսեաց որ ի վայրս բարձունս գեգերին : Այսչափ վասն մատենագրաց :

Մ. Մ. — Զկայ առ առոտ սակաւիկ մի : Ունիմ յաւելուլ ինչ ի բանս քո վասն անսանձն ազատութեան գրչաց ժամանակիս : Ամօք բազմօք յառաջագոյն, ի մեր իսկ աւուրս, բանասէրք ոմանք, զորս չէր մարթ առ կարի թեթեւամիտս ունել, ճեռն ի գործ արարին շրջել փոփոխել զուղղագրութիւն արդի լեզուի մերոյ . ոչ այլ ինչ էր այս, բայց վեր ի վայր տապալել զլեզուն : Սակայն ոչ յաջողեաց նոցա գործն, եւ ի տարեգիրս լեզուին պահի դրոշմեալ քանդակեալ իբրեւ նըշմարանք ինչ անցից հողմաց ընդ փայր եւ փայրապար չնչելոց : — Զէ իմ արդ յուշի թէ քանի՞ ամք իցեն, ևլին ի մէջ դար-

ձեալ ոմանք որ մեծամեծ ինչ գործոյ հնարագիւտ լինել կարծէին , նաև մասեանս իսկ ի գիր հանէին զգիւտոյն իւրեանց և զնորաձեւն ձեւոյ՝ որում ուշ ունէին լնդելացուցանել զգրական աշխարհ։ Զպէս պէս հոլովմունս անուանց որ այն-չափ բազմադիմի են ի լեզուի մերում՝ ածել հանել կամէին ի մի միայնակ թիւ հոլովմանց . սուկայն ծաղրն որ եկն ծածկեաց զվաճառս նոցա՝ կարճեալ կասեցոյց զնոսա յախուռն և յանհանձար գործոյ անտի նորութեան : Եթէ երրեք , վասն նիւթական ինչ դիւրութիւն մատուցանելց , հնար էր կամ պատշաճ քակտել ի հիմանց և բնաւին այլայլել զկերսլարանս լեզուի իրիք , նախ Յոյնք և մահաւանդ Գերմանք և Սլաւք փութալոց էին կատարել զայդչափ զմեծ փոփոխումն ի բարբառն իւրեանց որ չունի , իրեւ զմերն , միակ եւ միտարր հոլովմունս : Արդ՝ այդ ամենայն անպատեհութիւնք եւ անհանձար անհեղեղ նորութիւնք էլ դիպէին . վասն զի զազատութիւնն խոտորնակս իմն եւ գլուխ ի վայր ըմբոնէին և , զեղծեալք չարաչար ի պահպանութեան կանոնաց եւ չափոյ եւ սանձի , իշխան և տէր համարէին զանձինս իւրեանց՝ լեզուին :

Ս. Գ. — Եկից ես այժմ առ անթիւ զեղծմունս զոր այժմու գրիչք ո՞նչափ յորդագոյնս մուծին յարդի հայերէնն : Չեն զերծ ի կշտամբանաց աստի և որ գրեն ի հինն բարրառ : Արդ քանզի անհամար են արդասիք այդր դժնդակ ազդեցութեան՝ պարտ է ինձ խօսել մի առ մի զամենայն օրինակաց զեծմանց , ըստ կարդի կարեւորութեան իւրաքանչիւր բաժանմանցն , որպէս զի աստիճանեալ իմն կարդաւ և ծալս ծալս պարզեալ մերկացեալ առաջի ձեր եղից զնոսա և ի տես համօրէն գրագիտաց ուղղամտաց :

Արդ սոքա են զեղծմունքն :

Ա. — Վրիպածք ուղղագրութեան . Ա.Բ. (Ա.)^{*} :

(*) Ա. զլոտգիրն Արւելք յայտ առնէ : Զայս ծանօթութիւն վասն ա՛նորդիկ յաւելեալ է մեր՝ զի յաճախագյնս ի լրագրիդ յովդ միկ տեսանին զեղծմանին զորոց ճառեմք : Թէպէտ եւ առաւել քան զայլս չարկանէ նազայնոսիկ ի կիր , սակայն քանզի կարի ծանօթ լեալ է եւ ի ձեռս ամենեց յուն յածի՛ չլըիպի յաշաց եւ ո՛չ մին ի նոցանէ . եւ դարձեալ , մի վրիպած

Բ. — Վրիսլածք դպրութեան և բանականին լեզուի : Թէր-
թօն (Ա). Կաջական . Քրջական . Աղօքնի :

Գ. — Խորթ զօդուած . Արտասաշը (Ա) . Մարտիդար :

Դ. — Դժուարիմաց զօդուած . Յառելահպութիւն . Յառակնա-
յեց . Հայքաւասութիւն :

Ե. — Քմածին , անհամ եւ բազում անգամ անկանոն զօ-
դուած . Ա.կախովիշ . Անորակելի . Գեղաշայլ . Լուսածի-
ծաղ . Ծաղկաճեմ . Ծիփնաշըրք . Կաղդաքել . Հեղինաճեմ . Հեղիտալոր-
հուր . Հերիխուպոյր . Հետքեսէլ . Հոյակերպ . Հայակն . Հայարեւիլ .
Մահահայքայր . Յարդասեծար . Յափնաճեմ . Յողաշնել . Շիռայշ . Ու-
կեժանեժուր . Ուշադրաւ և անուշադրաւ . Պայծառապաճոյն . Պիրճա-
ռաճոյն . Սիրակուր . Սիրակուն . Ալցուդյոյն . Փառապանշ . Փառա-
քալ . այլովք բազմօք հանդերձ :

Զ. — Անսովոր յօրինուած . Շնորհակալիք . Ա.կալիք (Ա) :

Է. — Դատապարտելի , ընկեցիկ զօդուած . Ներաշնութիւն .
Ներշնչ :

Ը. — Արհաւիրք . Փայլակաճանչէցուցնել :

Զեռն ի գործ արտացուք այժմ խօսել զբաժանմանց մի
ըստ միոջէ :

Ա. — Վրիսլածք ուղղագրութեան . Ա.մն :

Սակաւ ամօք յասաաջ վերադիրդ ամն վէճս սաստիկս յա-
րոյց ի հրատրակի . պատգամք եւ պատասխանիք դէմ ընդ-
դէմ ելեալ միմեանց ընուին զլրտգիրս . Զյիշեմ քաջ թէ ոյք
էին իմաստնակըն այնոքիկ որ արբեալք ի տարտապայման իմն
մոլեգնութենէ հայրենասիրութեան՝ բիւրտագատիկ անձահ և

թէ գտանիցի ի նմա՝ քան զայլց զտան առաւել ազգէ ի միտու , որ ընդե-
լացեալ տակու տակու ընդունին զխրթութիւնն իրեւ զպատգամք հը-
րամնի : Իրեւ առաջնին եւ գլխաւոր լրագրի՝ ցանկալի է մեղ տեսանել
զշուք եւ զպատիւ նորայամին եւ յապահովի եւ զերծ տեսնեւին ի բա-
նագատութենէ եւ ի խծբանաց , չինել նմա ի կարգի այլոց լրագրաց որ
ամենայն անճահ եւ անհեղ եղ զբու ածոց եւ խրթութեանց անխարի բա-
նան զիիւնակս իւրեանց : Կամիքք զի խմբագրութիւն լրագրիս այնչուփ
փոյթ կալցի յատակութեան եւ հարազատ յօրինուածութեան լեզուին՝ որ-
շափ հոգածութիւն է նորա վասն արագութեան եւ ճշգութեան լրոցն զոր
տայ :

սովիեստական ընծայութեամբք հաւանեցուցանել կամէին զգրագէտս թէ ամէնայն նշանակէ և ամէն երրայեցերէն՝ եւնցի. և այսու համարէին մեծամեծ ինչ դործ հայրենասիրութեան վճարել: Եթէ ոք վասն ամէնայն յայտ առնելոյ՝ գրէր ամէն, չէր նա հայրենասէր: — Մեք ասեմք թէ ամէն չէ հայերէն: Ամենայն անուն կամ վերագիր որ յանդի նշանագրաւն որում յառաջ ընթանայ նշանագիր ձայնաւոր որ չիցէ . . . և . . . ։ Են գրի եւ ոչ են. ի բազմաւորն երրորդ դիմոց ժամանակաց ինչ չորից Ըծորդութեանց միայն դտանի են եւ ոչ այլուր: Աւասիկ օրինակքն որ անթիւ են. Մէն, նկարէն, նիւարէն, ժակորէն, ոսկէն, ասուածէն, ժապառէն, զէն, ծուեն, անօրէն, յանարէն, հայերէն — Զէն, ապառէն, ժապառէն, զէն, ծուեն, հէն, կառէն, պարէն, պարէն, պառէն, որէն. — անուանք մարդկան և վայրաց — Աշէն, Արէն, Արոն, Գուրգէն, Զա-էն, Խո-էն, Սո-էն և Արէն: Ի դէպ է յաւելլուլ աստ թէ նոյն բանք են և վասն անուանց որ յանդին չ, չ, չ, « նշանակագրօք. որպէս Շէն, Երէն, Բէն, Հրէն, Աշէն, Հողէն, Հողէն, Ապառէն, Քէն, Ֆէն, Էրէն, Են, Քահավէն, իւեն, քէն, քէն, պէն, մէտառէն, այլովքն հանդերձ. — Արէն, Արոտչէն, Արէստակէն, Ներսէն, Մոշէն:

Ս. Պ. — Աշխատութիւն կարի ծանր առեալ ես յանձն, բայց ի զուր է եւ վայրապար վաստակն քո. քանզի յամառ է տգիտութիւն. յետ այսչափ մեկնակ եւ լուսաւոր ընծայութեանց, դարձեալ վազիր տեսանելցո եմք յԱրեւելք լրագրի և այլուր ամենայն ուրեք ոչ միայն ամէն, այլ և զամենայն պատիժս պատուհամից զոր բախտն դժպհի ի չորեքտասան դարուց հետէ ածէ ժողովէ և հեղու ի վերայ հայ լեզուի:

Ս. Գ. — Յառաջ մատուցուք:

Բ. — Վրիպածք դպրութեան և բանականին Եկզուի. — Թէրին. Կնոջական. Քրոջական. Ապէրէն:

Ի հայ լեզուի սակաւ են անուանք որ յանդին թարմատար մասնկամբ ծն. Աղջն, Գեղջն, Գողջն, Գործն, Կործն, Կըրծն, Լալջն, Մոռացն: Յայս ամենայն անուանն է ինչ մի որ վրիպեալ է յուշոյ յիշատակէ այնոցիր որ ստեղծիչք ներնենի եղին: Յանուանս անդ զոր յիշեցաք այժմ՝ դործ ինչ կամ ազդեցութիւն դործողի ուրուք նշմարի, այսինքն՝ արգա-

սիք ինչ շարժման, վաստակոյ, աշխատութեան և կամ ներքին յուղից և շարժմանց. երբեք վիճակ ինչ անշարժ կամ դիրս անփոխս յայտ ոչ առնեն: Եթէ զանուանս օտարս որ յժ յանգին՝ թարգմանել պարտ իցէ նմանեաւ ի հայ, կարի յոյժ դիւրին լինէլ վաստակ այնոցիկ որ յօրինեն բարբառարանս: Մեք զՓeuilleton թերթակ միայն կարեմք թարգմանել. քանզի ճշգիւ նոյն և միագոյն սլոյման փոփոխութեան է յերկոսին լեզուս և չէ բնաւ հակառականին և լեզուագիտական օրինաց: — Ումոնք զՓeuilleton թերթեակ թարգմանեցին որ չէ կարի այլակերս ի մերոյն. միով և եթ նուազականաւ կայ մերն. բայց քանզի գաղղիական անունն ի կրկին նուազականաց կազմեալ է, թերթեակ ճշգագոյն երեւի. նախ թերթիկ՝ յորմէ թերթեակ: Մեք վասն դիւրագոյն եւ միամեւ միանման բերելոյ զշնչումն ի հոլովմունս անուանդ (ներնեկի? ներնեակի? ներնեկով? ներնեակով?) զթերթակն առաւել ընտրեցաք. սակայն չդժկամակիմք ինչ, եթէ մերժեսցի թերթակն մեր և ընկեսցի ի մի կողմն. թող եկեսցէ թերթեակ և կամ ո և պէտ այլ անուն, չէ մեզ փոյթ. շատ է թէ ողն ներնեն բարձցի ի միջոյ: — Իսկ վասն երից վերագրաց որ գան զկնի ներնեակ, մանաւանդ վասն երկուցն առաջնոց, աղաչեմք զմատենագիրս ընթեռնուլ զդպրութիւն աւուրբք ինչ յառաջ քան զմիջամուխն լինել ի մատենագրել. քանզի աննախանձ է դպրութիւն առամենեսին. ուսուցանէ նա մեզ ամենեցուն անխտիր թէ պարտ է ասել հանոցի, ուստական, աղօքն, եւ ոչ ինչական, որովական, աղբէնի:

Գ. — Խորթ զօդուած. — Արդառանձոր. Մատուկար:

Վերագիրդ արտասահք որ յԱրեւելից ցմոււս արեւու տարածեալ լայնեալ նոսի չէ արժանի ինչ եւ մեծարգոյ ծընունդ մոտաց այնորիկ որ յլայցեալն է զայն. մանաւանդ թէ վասն օրինակ չար տալոյն, յանցուած ծանր համարեալ է նմա, զոր ոչ կարէ քաւել, եթէ փոյթ մեծ յանձին ոչ կալցի անհետ աւանելոյ զլիթածն զոր արկ ի հրասարակ: Բայտ մեզ պարտ է ասել, առարկէու, առարտէամ, առարկարդէ (*), առարտպայծան, առարծինակ, կամ գոնենեա առարտանձոր. որպէս զի նորութիւնքն

(*) Արեւելիք՝ յարագաշտութիւն հատեալ զդորութէն եւս արար ուրարտի: լիթէ բարբառարան յօրինել ունիցին երբեք ի մտի խմբագերք այնր

որ իբրեւ զգետ յորդեալ զեղուն օր ըստ օրէ յարդի բար-
բառն մեր՝ մի՛ այնչափ ա՛շ-պա՛-սս՛-վս՛ը երեւեսցին։ — Իսկ
զժուարչուան մեկնել այնո՞ւ անկ է որ զայն ի չգոյէ ի գոյ ա-
ծեալ է ։ Քանզի այնպիսւոյն պարտ է յանձին բարձեալ բերել
զնմանին։

Դ. — Դժուարիմաց զօդուած։ Յառելամքութիւն։ Յառա-
հայեց։ Հաճբառագուստիւն։

Զմեկնութիւն յառելամքութիւն լսնդրել պարտ է յայնմանէ
որ զմարդարիսն զայն անգին յաւելի գանձս լեզուին։ բայց
պարտ է փութալ գտանել զնա և լսնդրել զմեկնութիւնն,
չեւ աւելոյ առեալ տարեալ և ընդ օդս ցրուեալ զաւելին։
— Վասն յառեկնաց վերադրին յերկիւղի եմ և ի դուման,
մի՛ գուցէ յաւանակը հեղձուցանիցեն զմեզ։ — Իսկ համբա-
ւատուութիւն առեղծուած իմն թուի, զոր մեք ոչ կարա-
ցաք լուծանել։

Ե. — Քմածին, անկամ և բազում անգամ անկանոն զօ-
դուած։ Անսուխիդ. Անսուխիւլ. Գեղադայլ Լիւառապ. Լուսածիծաղ.
Ծաղկածէմ. Ծինաշարժ. Կապուտիւղ. Հեղինածէմ. Հեղինաշարհուր.
Հերջինապույր. Հիսութեսկ. Հոյակերպ. Հոյացէն. Հոյագեսկ. Մահա-
համբայը. Յարբառեժուր. Յուինածէմ. Շողշողէն. Շիանոյշ. Ռուետան-
ժուր. Ռաշիրառ և Անուշիրառ. Պայծառապահոյն. Պերճապայծառ.
Սիստիուր. Սիրոկան. Սլաշտիոյն. Փառապանծ. Փառափայլ։

Թէպէտ և զվերադիրս լոկ կարգեալ տողեցի ես ասու,
սակայն գոն և անուանք ոչ սակաւք որ ի նմին սակի են և
ի նմին պատուի։ Կէսքն խորդ են, ընկեցիկ և յանչափս տը-
գեղ (հարցանդուած. որոշմանէիք. նկատուութիւն. փոփանիատութիւն.
արդարադաս)։ Որպէս է տեսանել յօրինակսն անդ զրս րե-
րի և մէջ մինչեւ ցայժմ։ իսկ կէսքն բնաւ իսկ աւելուդու-
թիւնք են և լեզուի իրիք օտարի նմանութիւնք։ Քանզի փո-
խանակ բնակաւորն և պարզ իմն օրինակաւ յայտ առնելոյ

լրագրի, իրատ տամբ նոցա և զանուանան բարտեպ, բարտպայնն,
գլուխ ի վայր ըթել և զետեղելի պատշաճ վայրի ըստ կանոնաց իւրեանց
դպրութեան (Գերակ. գրչաց մթ. գար. տպեալ ի Հոնկ Չունկ. յամին
1820, եր. 87.)

դաղերսու անուանց ընդ միմեանս, որպէս ստացչի և ստացելցյ, բերեն զօդեն զերկուս անուանսն ի մի անուն, և այնպէս յօրէնս անդր օտարոտի իմ լեզուի փոխեն զբնութիւնն և զհարազատ պայմանս մերոյ շքեղ բարբառոյ: Գահաճառ որ մինչեւ ցամ 1887, գրեա թէ ամս երեսուն և աւելի, ժանի հառ, նախառական հառ գրէր յամենայն լրագիրս (արդի հայերէն,) ահա այսօր ժանի հառ գրի, թէպէտ և չէ անունդ այնչափ սոսկալի իրրեւ զայլ բազում անուանս որ քատմնեցուցաննեն զլօսու. մեզմէ հնչումն սորա և կանոնաւոր կազմածն. բայց քանզի յայսպիսի դէպս չէ բնական ոգւոյ և կանոնաց լեզուի մերոյ զօդել միշտ զանուանս ընդ միմեանս, պարտ է մեզ խորշել ի զօդուածոց նմանեաց: Ի բարբառսն որ զայս ձեւ զօդուածոյ անուանց արկանեն ի կիր՝ չէ հնար ա՛յլ ազգ գործել. որպէս առ մեզ բնական է ասել հառ ժանի, հառ է ժանի, նոյնպէս առ նոսա բնական է՝ մանաւանդ թէ բւնական եւս է ասել thron speech, անէ: Thron Rede, էերմ: —Ամօք ինչ յառաջ ծաղր և ծանակ լինէին խումբ ինչ մատենագրաց զորս Գոթս, Գերմանս անուանէին և զգլուածս նոցա գոթերէնս: Արդ, որ յայնժամ Գոթս զնոսա կոչէին՝ զիա՞րդ այսօր ինքեանք ի գլխովին դարձան և եղեն Գոթք, մանաւանդ թէ ոչ միայն Գոթք, այլ և Ռ'ստրոգոթք: Յիշելի դէպէտ է աստ և անուանս ինչ որ ափ ի բերան առնիցեն զնամինիս մեր, եթէ երբեք ելեալ ի զերեզմանաց իւրեանց ընթեռնուցուն Շոէնհան: Մերգալուսն: Սեդիրան (իրանասեղմ ?) Նըտաշըջան: Ցուցակէն: Մազիէնարոյ (ծաղկամարտ .) Կայթագն: Շատեղն: Ներշնչան: (*) Ո՛ ժամանակք, ո՛ ճաշակք: Թուրի ինձ երբեմն երազել և ընդ ազօտ իմն իրրեւ ի տեսլեան ուրեք նըշ-

(*) Զեր ինչ մեզ դժուարին գտանել անուանս վայելուչ փոխտնակ անուանցդ ո՛ր այնչափ խորթ և անհետեթ են և թուրի թէ առ ծաղուհանեալ իցն ի հրապարակ առ ի փորձել զգրագէտս: Մեր ոչ կամեցաք առնել ինչ մեզէն և ոչ ստեղծանել ըստ կամի և ըստ քմաց, որպէս առնեն արդի խանդարիչք: Զպաշտոնդ զայլ ծանր թողումք առ ակումբ մի գիտնոց կամ ակադիմիա ինչ, որց հաստատութիւնն փափաքելի է յյշ վասն պիտոյից մերոյ ժամանակի: Ստկայն անդամք այնր ժողովոյ պարտին լինել ոչ նորա որ անուանմք լրկով ինչ հայերէնագէտք, և չդիտեն ինչ որ ա-

մարել զգեղեցիկ անուանսն զոր տալոց էին իրացդ այդոցիկ Նախնիքն մեր , ստեղծիչք այնչափ մեծառուն և պատուական գոյից հայ լեզուին : Անուանքն զոր հնարելոց էին նոքա վասն իրացդ այդոցիկ՝ ոչ երկիւղ ազգելոց էին ի մեզ և ոչ սարսուռ :

Վերադիրքն զոր ի վեր անդ տողեցաք՝ սակաւագոյնքն են ի բազմաց անտի : Անդուստ ի բնէ իւրմէ ընչաւէտ է հայ լեզուն , առատ եւ մեծառուն ի վերադիրս , որ իրրեւ ժառանգութիւն եկեալ հասեալ են առ մեզ ի նախնեաց . սակայն նորքն չշատացեալ այսչափ լիուլի ակաղձեալ մթերօք , յաւելին գէզս դէզս վերադրաց որ ոչ միայն անօգուտ են , այլ և աւելորդ , տգեղ և բնաւին իսկ ընկեցիկ : Յայնչափ թիւ համարոյ հասեալ են այժմ վերադիրք մեր , մինչեւ հնար լինել ասել թէ զրարբառն իւրեանց՝ լեզու վերադրաց արարեալ են Հայք : Ունիմ իրաւունս ասելոց և բազմապատիկ հաւանութիւնս ի ձեռին հաստատելոց զայդ : Եթէ մտադիւրագոյնս ընթեռնուցու ոք եւ մանր միտ դնիցէ , բազում անգամ զիմաստ բանից՝ մանաւանդ ի բանաստեղծականս , վերադրովք եւեթ յարդարեալ և լրացեալ գտանիցէ ի գրուածն մերոյ ժամանակի : Ոչ սակաւ օրինակս տեսանելոց եմք յաւազ կոյս ճառիցս :

Այժմ վասն մեկին եւ լուսաւորագոյնս յայտ ածելց ըզթերութիւնս միոյ միոյ ի վերադրաց յիշելոց ի վեր անդ՝ ջան յանձին կալցուք պարզել զատանել զնոսա յուրոյն ուրոյն բաժինս , զի մի՛ խառն ի խուռն կնճռեալ պատառեալ եւ մի զմիով խոնեալ մեկնութիւնքն երեւեսցին :

Առաւել քան զմիոյ գանկի գին իցէ . այլ ընտիր ընտիրն միայն գրագիտաց մերոց որ քաջ հմտաք իցին պատուական և անդին գանձուց ծածկելոց հնոյ հայ լեզուի , նորա շքեղութեանցն , և հնարագէտ , նուրբ և ճարտար արուեստին որ նշմարի յամենայն արգասիս և ի ստեղծուածն նորա . քանզի նորին և ճշգրիտ գիտութեան միայն հնար է զմիծատուն մթերս հնոյն պատշաճնուցանել առ արդի բարբառն մեր և ցուցանել նըմա զուղղութիւն շաւզացն ընդ որս անցանել պարտ է նմա առ ի զարդանալ և բարդ աւաճել :

1. — Անոբիրիլ. — Զիք վրիպած ինչ կազմուածոյ կոմ զօդուածոյ , սակայն չէ քաղցր ի հնչել: Պարտ է խորշել, ըստ կարի , ի դուժ եւ ի խիստ հնչմանց . լաւագոյն է ասել շլացուցիչ , թովիչ եւ կամ այլ ինչ:

2. — Անոբիրիլ. — Զէ հնար զամենայն ինչ օտարի ճըշ դիւ շրջել եւ յիւրն ածել միշտ : Յորժամ դժուարութիւն ինչ ելանիցէ ընդ առաջ կամ կնձիռն առ ի թարգմանել բան առ բան՝ պարտ է տալ այլ իմ գարձուած բանիցն և չմուծանել խորթութիւն ինչ նոր ի լեզուն: Զայս առնեն ամենայն մատենագիրք որոց խնամք են եւ հոգածութիւն բազում՝ անսարատ և անվթար պահելոյ զօրէնս եւ զպայմանս իւրեանց բարբառոյն: Մի՛թէ գաղղիացին կամ գերմանացին ժտիցի՝ երբեք թարգմանել բան առ բան զամենայն ինչ որ չգտանիցի յիւրում լեզուի . զի՞նչ առնիցեն յորժամ տեսանիցեն ի հայերէն մատենի իմիք ֆայր յէ յէ-ըսկէն կամ անչին արար . կամ ի թրքերէն գրուածի ուրբեք՝ ելքուն ոչոշուն վերտէն , կամ պէն օբարա ընուրուր իւն ուշտ ըշտ կելու: Բան զլոյս տուըն-ջեան մեկնագոյն եւ յայտնի է՛ թէ չէ՛ մարթ , չէ պատշաճ զառանձինն պայմանս եւ զամենայն սեպհականութիւնս միոյ լեզուի ծշիւ եւ նմանեաւ հանել յայլ լեզու . գաղիփեարէնն որ կատարելագոյն է ի մէջ լեզուած եւրոպայ՝ հանեալ բան առ բան ի հայ , խոտան լինի եւ բազում անդամ կարի իսկ ծաղրելի , զոր ոչ առնուն ի միտ գրիչք մեր որ հետամուտ են այժմ ստեղծանելոյ հայ-գաղղիական բարբառ մի: Օտարութիւնն , ուստ ուստեք եւ գացցէ , ի գաղիերէնէ կամ ի թրքերէնէ , ոչ կարէ ընդունելի լինել եւ զիրաւունս քաղաքացւոյ վայելել :

3. — Գերագիրդ ոչ կարէ այլ ինչ յայտ առնել , բայց միայն ո՛ր ընդ էեւն է-ը զմայլեալ է՛ արդ որ գրէն կի՞ն էեղաղմայլ՝ զի՞նչ կամի յայտ առնել , կի՞ն ո՛ր ընդ էեւն է-ը զմայլեալ է՛ թէ էեւն է-ը զմայլեալ է՛ արդ երկրորդ յայտ առնել կամի , յոյժ վրիպեալ գտանի ի նախատակէն իւրմէ: Այնպիսոյն առեմք . բարեկամ , առ սէր նորութեան կամ առ հայերէնագէտ զանձն երեւեցուցանելոյ՝ մի՛ ի սնոտիս և ի խօլամտութիւնս անկանիր :

4. — Ավատար. Եթէ լի է՝ առատ է. եթէ առատ է՝ լի է : Ավատար շտանքան մը , ասէ գրիչն . այս հայերէն է . իսկ առաջ եւ շնչու սեղոն մը գոթերէն է :

5. — Լուսածիծող . Լուսածիծող ճակար :

Մեք գիտեմք թէ երեսք մարդոյ ծիծաղին , և նշանն այն զուարթութեան ի մասունս ինչ միայն գիմաց նշարի լոկ . քանզի են մասունք որ ոչ են հալորդ այդմ տօնի , եւ ճակատն մին ի մասանց տնտի է : Գոն այլ մասունք որ յանկ են եւ սերտիւ հաղորդ ի գործ ծաղու . վասն այնորիկ մարթ է , այլափոխ բանիւք , ասել եւ զաշաց եւ զբերանոյ թէ ծիծաղին . շարժմունքն զորս նկատեմք ի նոսա՝ յորժամ ծիծաղի ոք , արդարացուցանեն զձեւդ զայդ հռետորական արուեստին : Թէպէտ եւ չէ առ մեզ սովորութիւն տալ ծիծաղելաշաց եւ բերանոյ , սակայն իմաստունքն Երտպացւոց որ մանր քննեն եւ խուզեն զգաղոտնիս և զամենայն դոյզն եւ թեթեւ իսկ երեւոյթս անազդելիս որ ի ընութեան՝ հաստատեն զայդ , եւ պայմանս այս խօսից ընտելական է առ նոսա : Արդարեւ աչք իւրեանց շողաւոր եւ թւոթուն երերմամբն զուարթութեան գիմացն բաղում ինչ լինին ի նպաստ . իսկ բերան՝ աղբեւր իսկ է եւ առաջին կէտ շարժման որ ի ծայրից անտի շրթանց առնու սկիզբն գալոյ ի յայտ . սակայն ճակատու չիք շարժումն , ոչ խալայ և ոչ խայտայ : Բայց գիցուք գրեսցուք թէ և ճակատու իցէ ինչ յանկութիւն ի գործ անդ ծաղու . իսկ լուսոյ զի՞նչ աղերս իցէ ընդ ծաղու զի զօդեալ զուգեսի ընդ նմա . մի՛թէ պատճառ ծաղու լոյսն իցէ կամ ծաղըն զլոյս ծնանիցի : Բնական է , մանաւանդ թէ միա՛յն բանական՝ ասել պայծառ ճակատ , ջինջ ճակատ , լուսաւոր ճակատ , այլովքն հանդերձ :

6. — Ծաղկանէմ . Ծաղկանէմ ափունէ , այսինքն ափունք ընդ որս յորժամ ճեմիցի ոք , ծողին ուեսանցէ՞ , հոգուոցէ՞ , կոփէցէ՞ , կամ ափունք ուր ժաղիկ ճեմցին եւ կամ ափունք որ չ մը ժաղկանց ճեմցին . զո՞րն ի սոցանէ պարտ իցէ իմանալ : Առեղծուած :

7. — Ծովիալարժութ . Ծովին՝ շարժուն է տառունն , շարժ զի՞նչ է : Ճաշակի խանգարելոյ ամենայն ինչ ներեալ է : Ի ուամիկ լիզու չողին անուանեն զայդ :

8. — Կապուտիկել։ Կապուտիկել աչ։

Միթէ չիցէ լաւագոյն ասել քեղեցի կաղոյր աչ։ այսու
դարձուածով բանից իմանամք՝ թէ աչք ինքեանք յինքեանց
գեղեցիկ են եւ ոչ վասն գունոյն իւրեանց որ կապոյտ է։
քանզի մարթ է նոցա լինել թուխ եւ դարձեալ լինել գե-
ղեցիկ։ իսկ ի կապուտիկ աչ՝ աչքն չեն ինչ, այլ գոյնն նոցա՝
կապոյտ, գեղեցիկ է։

9. — Հեղինաճեմ։ Հեղինաճեմ։ նկարագիր նոյն որ ի 7։

10. — Հեղինաճեմ։ Զարհուրեալ, զահի հարեալ մեկնիմ
լրաց։

11. — Հերշինապոյր։ Որ հերշու զալս, զորայր։ Պառապա-
ճեօյ։ նկարագիր նոյն որ ի 7։

12. — Հյորեակ։ Անօգուտ նորութիւն, հնարեալ վասն
զարդու պաճուճանաց՝ զոր ոչ ունի պէտս լեզուն արկանե-
լց զանձամբ։

13. — Հյոյսկերու։ ի նախնեաց մերոց ունիմք զվերա-
Հյոյսկն։ գիրդ հյոյսկող զոր անխիղճ, անխէթ
Հյոյսկեակ։ և կարի համարձակագոյնս արկանեմք
ի կիր։ Սակայն չեմք քաջ տեղեակք թէ զի՞նչ հոյն յայտ
առնիցէ։ վասն այնորիկ չգիտեմք եւս թէ հնա՞ր իցէ հոյիւ
կերտել, շինել և տեսանել ինչ։

14. — Մահանմբոյր։ Հ. Ո՞ կարէ զմահ համբուրել։ —
Արձանագրութիւն, զի գրեալ է մահահամբոյր արձանա-
գրութիւն։

15. — Յորէաժետու։ Յուրա, անհամ եւ աւելսրդ զօ-
դուած։ Զի՞նչ առաւել քան զմեծարայ և քան զմեծարգի
յայտ առնիցէ, ոչ գիտեմ։

16. — Յոդինաճեմ։ Եղբօրորդի ծփինաշարժի, եւ առաւել
զօգիկ քան զնա։

17. — Շողունն։ Թուխ թէ աղդ ինչ իցէ ծառոյ։

18. — Շիանոյը։ Աստ ամենայն ինչ կատարեալ է։ ազ-
դականութիւն ընդ ծփինաշարժի, մթութիւն, անհարազա-
տութիւն եւ յանչափս տղեղութիւն։ Բարեկամ, յորժամ
կամիս նոր, խորին, հմաւտ և փայլուն երեւել։ նոր լինել
լինիս։ բայց խորին, հմաւտ և փայլուն չկարես լինել։

19. Ուկեբանիուր : Ուկեբանիուր էլսուի :

Կամք են ասել էլսուի որոյ հերժն սոկեղնեւ քալորեւ եւ քան-
տուր էնդուր : Որպիսի սքանչելի բայց եւ ո՞րչափ ասլրա-
կարդ լեզու՝ որ զայսչափ բազում և ազգի տեսիլս
միահաղոյն ի մի աճ ձուկ վայր ամփոփեալ բերէ ի մէջ : Եթէ
սակաւիկ մի ճգունս ինչ առաւել յանձն տռնուցուն գրիչք
մեր , աներկմիտ եմք թէ յաջողեսցին տողս բազումս բանից
ի մի միայն բան ամփոփել : Գիտեմք զի գրիչն կամի զգաղ-
ղիականն Chevelure d'or յայտ առնել , այսինքն սոկերէ , սոկ-
քանիուր :

20. — Ուշտրաւ և անուշտրաւ : Ի բազումս յարդի մատե-
նից : Փոխ առեալ է վերադիրդ ի Հունդ արերենէ :

21. — Պայշտառապահոյն : Շաշիւն ձայնից :

22. — Պէրճապոյշտառ : Շառաչիւն հնչմանց :

23. — Սէտտիուր : Ընկեր անբաժին յարդամեծարի եւ
քաղցրադոյն քան զնա :

24. — Սէրական : Սէրական ոյցելունիւն :

Որպիսի՞ ինչ իցէ այցելութիւնդ , յորում սէր հեղեալ զե-
զուցու : Մեք ոչ կարեմք իմանալ զայդ . քանզի այցելու-
թիւնք յաւուրս մեր չեն առատ այնչափ ի սէր զի զեղեալ
յորդեալ խաղացէ ընդ գետին : Իմանամք այցելութիւնս սի-
րավիրս , այսինքն ուր սէր սերտ եւ անխառն մղէ զրարե-
կամս գուլ առ միմեանս , եւ ոչ կեղծ եւ բռնական ինչ ձեւ
քաղաքականութիւնն կամ նկատութիւն ինչ շահուց : Բայց
գուցէ գրիչն զայր եւ զիանուին խառնեալ է ընդ միմեանս , և
յետ ի բաց հատանելոյ զային այսինքն զային , զմնացեալ կաթն
ամացեալ է ի սէր եւ այնպէս գոհար մի եւս յաւելքալ ի շը-
քեղութիւնս հայ լեզուի : Աւասիկ պտուղն զոր մոլեգնու-
թիւնն ստեղծանելց ածէ յարդիւնս :

25. — Սլայտոյն : Զգիտեմ վասն է՞ր նախնիք մեր փո-
խանակ ասելոյ ժբարտ , ընթացաբաժ , շարժաբաժ , ասէին միշտ
արտիտէր , արտիըննոց , արտիշարժ : Արդի գրիչք մեր խորա-
մանկ են և կարի զգաւառք . չէ հնար խարել զնոսա և տալ
գրել Փութասլաց (*) :

(*) Բատ կանոնաց դպրութեան միայն մարթ է ասել այսպէս . սակայն
չէ բնաւ ընակիր քանզի իշաս է ի հնչել և նման Ալաւերենի :

26. — *Փառապանծ.* } Բարեկամք են բնակակիցք. ոչ կա-
 Փառափայլ. } ըեն մտանել ի տուն սցլոց :
- Զ. — Անսովոր յօրինուած. Շնորհակալէն. Անհաղութիւն :
- Շնորհակալութիւն. Ակնկաղութիւն :
- Է. — Դատապարտելի և ընկեցիկ զօդուած. Ներազնաբնիւն.
- Ներյժ. և այլք բազումք :
- Թէպէտ և դատապարտելի են և ընկեցիկ ամենայն ա-
նուանք և վերադիրք որ յերիւրեալ զօդեալ են յառաջադնայ
թարմատար մտանկամբքն .
- Բաղ (Յաղդասութիւն, Յաղազանութիւն, Յաղճիւսել.)
- Գեր (Գերապանծ, Գերահրաշ, Գերազօր, Գերաբգիսել.)
- Ենթ (Ենթադատութիւն, Ենթացոյց .)
- Համ (Համամաքրենի, Համանցնութիւն, Համափառել.)
- Հոմ (Հոմագծագրել, Հոմանունակ, Հոմապարաւորիլ.)
- Մակ (Մակերեւոյթ, Մակաստացականութիւն, Մակադար-
ձութիւն .)
- Յար (Յարակայանալ, Յարառոյել, Յարադրութիւն .)
- Ներ (Ներամիտ, Ներհուն, Ներընդունակ, Ներմակագրել.)
- Պար (Պարահոմել, Պարառութիւն, Պարաղնուլ.)
- Ստոր (Ստորասութիւն, Ստորուսել, Ստորաբաժանում .)
- Տրամ (Տրամատութիւն, Տրամատպաւորութիւն, Տրամա-
խոհութիւն .)
- Փաղ (Փաղառութիւն, Փաղանուն :)
- Ցորոց կարի բազումք վտարեալ մերժեալ խոկ են յընտե-
լական բարբառոյ աղքին . սակայն քանզի են բազումք որ ա-
խորժեն տակաւին գալ զգայուի՝ պարտ համարիմք ջանալ
դարձուցանել զնոսա յայդպիսեաց գարցութեանց : Զերկուց
միայն ունիմք սատ խօսել . զայլսն մնացեալս գատապար-
տեալ է բնակաւորն ոգի որոշողութեան և ճաշակ աղքին որ
չէ տակաւին անհետ լեալ բնաւին :
- Դ. — Ներազնաբնիւն. Անունդ որ իբրեւ թարգմանութիւն
autopsie անուան առաջի մեր արկանի , տգեղ է եւ խորթ և
ամենեւին այլակերպ յիմաստէ անտի յունական անուան աֆիօ-
ստիմ , որ անյամբ անյնին գննել , ոչ ունել յայտ առնէ. վասն այնորիկ
ինդիադիտունիւն , ինդիականունիւն մարթի միայն ասել , և ոչ
այլ ազգ :

Զ. — Ներսոն. Վերադիրս. այս նորոգ ելեալ է ի հրապարակ, իրբեւ արշալոյս որ վարդագոյն բոցածածանչ նշուլիւքն փարատեալ զմութեն գիշերոյ՝ տարածեսցի ընդ երեսս լերանց և դաշտաց։ Անդրահայերենախօսն Ե. հնարեաց զայդ։ և քանզի յանդէտս արար զոր արարն, պարտ է ներել նմա և ուսուցանել թէ ո՞ւր իցեն վրիալնքն։ Լատինական վերադիրն intensum' է ու tensum կցեալք ընդ միմեանս ըստ օրինաց ոյնր լեզուի և յոյտ տանէ զայս ինչ, չ ներւո կայ, է կեռոն կայ դիմու, չ ճշջ կայ դիմու, ընթացեալ, որ է խիտ, հոծ, սեղմ, այսինքն է կարծր, խիտս, պինդ, սաստիկ։ Արդգիտասցէ բարեկամիկն մեր թէ intesum (դադ. intense) սաստիկ է, կամ բուռն, կամ ուժգին որպէս ինչ կամեսցի. սակայն ո՛չ երբեք ներսոն, ո՛չ երբեք։

Է. — Ս. թիւմակը. Փայլակնածանկնէցուցանել։

Ընդէ՞ր չասել վայլակնակայծակնածանչեցուցանել, վայլակնակայծակնաշանթածածանչեցուցանել։ քանզի գոն օրինակը ոչ սակաւք եւ տո հնովք սմամբք որ ասացին հոմաբարձութաւանել, համաբարձութաւանել, որոնտութաւանել և այլ գարշութիւնս նմանիս։ Յո՞ երթամք։ է՛, բարեկամ, է՛ ինչ մի զոր պարտ է մեծ արել, այն է օրէնք։ Թուրքն և Յոյնն, իտալացին, Գաղղիացին և Գերմանացին, յորժամ կոմիցին ի գիրհանել ինչ, խոկան, տուայտին և ընդ բազում քիւտն մըտառնեն. գրեն և ջնջեն և կրկին գրեն և դարձեալ ջնջեն, մեւս եւս անգամ դառնան և գրեն և հուսկ ուրեմն յաջողին և հասանեն ի գրել ուղիղ, և է՞ր այդ ամենայն. որպէս զիվրիալնք ինչ հակառակ կանոնաց գպրութեան և օրինաց լեզուին մի՛ սպրութեսցին ի գիրսն և մի՛, մանաւանդ զնդ. դէմրաւոք ճաշակի։ Խոկ Հայն զի՞նչ առնէ. չիք նորա կանոն և օրէնք որ ի նեղ արկանիցեն զնա. չիք խոչ կամ արգել որ զվագսն նորա խօլականս կասեցուցանիցէ. այլ իրեւ երիվար արձակերասանակ սուրայ, վարդէ, սրանայ և ընդ ոսիւք կոխէ զօրէնս և զչափ և զկշիռ ամենայնի. զի՞ փոյթէ նմա զօրինաց ինչ զոր այլոց հաստատեալ է. են նորա օրէնք ի խելավատակի իւրում։ Եւ քսնզի բազումք են որ գրեն անսանձ անկարգ և անխիթ, եւ իւրաքանչիւր ոք իրեւ զըրագէտ իշխանութիւն ընծայեցուցանէ զանձն մատենագրական աշխարհի, ո՛չ եւս է հնար տեսանել լեզու կանոնեալ

յերիւրեալ և օրինօք հաստատնովք յարդարեալ, այլ խառնուրդ իմն լեզուաց բազմաց և ամենեւին թոհ և բոհ : Յուշ լինի ինձ աստ ինչ մի՝ զորմէ չկամիմ զանց ասնել: Ի հայ լեզուի ասեմք շարդարել, պճնել, պահունել, անել և բազում անգամ ըստ պատշաճի տեղոյն՝ յարդարել: Արդ հարցանեմք . այսչափ մեծատուն և ընչաւէտ ՞՞ լեզու իցէ որ զնոյն և զմի ինչ այսչափ պէս պէս օրինակօք յայտ ածել կարիցէ: Սակայն զի՞նչ առնեն գրիչք մեր . չշատանան առաւելութեամբքդ այդոքիւք, և վասն առաւել գեղեցիկ և շքեղ և հոյակապ և նորանշան և սքանչելի գիւրեանց խորհուրդսն ընծայեցուցանելոյ՝ ասեն քեղաղլրդել, հրաշաղլրդել, պայծառաղարդել, գումառաղարդել (որ է՝ զարդազարդել). ո՞հ . . . չգիտեմ ոյլ եւս զի՞նչ ասել:

Զոր ինչ ասացաք մինչեւ ցայժմ զաւերածոյ լեզուին և զզեղծմանցն որ յորդեալ զեզուն օր ըստ օրէ, զկարի սակաւուց միայն մարթ եղեւ մեզ խօսել. զոր ինչ գտաք ի գիրս ինչ և ի լրագիրս կարի մօտագոյն ժամանակաց, զայն ըերաք ի մէջ, եթէ քաղ հանել կամէաք յամենայն գրոց որ երեւեցան ի քառասուն և աւելի ամաց հետի՝ պարտ էր մեզ տոմարս ստուարս և բազմաթիւս կարդեալ գրոշմել: Սակայն աստ անդ գտանին բազում անուանք, վերադիրք, սասցուածք և ոչ սակաւ եկամուտ պայմանք խօսից թարգմանեալք յօտար լեզուաց, որ ոչ մտանեն ընդ բաժանմամբքն զոր վերագոյնն կարդեալէ մեր, և զորոց չկարեմք զանց առնել և թաղել ընդ լուռթեամբ :

1. — Անկոնց ծառայել: — Յորմէ լեզուէ թարգմանեալէ: Յուրա է, անհամ և ծագրելի . թրքերէնն լաւագոյն է և իմաստնագոյն . էերէ անկոնց ասէ:

2. — Բացիէն . . . բանասէր ոմն, ոռ սէր նորութեան կամ առ կարի գիտուն և խորին երեւելոյ յաչս բազմութեան՝ ասացեալ է բացիէն ժողու: Գոն վերագիրք որ պատշաճին առ բազում իրս, որսէս մէծ կամ իուր, բարէ կամ յուր, ժեղչին կամ ոդէն, բայց գոն և այլ վերագիրք զորոց չէ մարթ պատշաճեցուցանել առ ամենայն ինչ, որպէս կարհանասոն, ժինեւէր, ժանիքանէր, այլովքն հանդերձ: Բախտիկն ի սոյս համարի է: Նախնիքն մեր բացլսվիկ ասացին զմասնէ իմեքէ

նափորտի , այսինքն է զմասնէ ինչ թեթեւոյ կանացի զարդուց , կամ ժապաւէն կամ երէզ , որ այնպէս հանգրիմեալ ամիսոփեալ իցէ ի միոջէ ի ծայրիցն առ միջովք կամ առ ուլսամի՝ զի ի ձեմել անդ կնոջն պանելը , հողմոյ որ ի խաղալոյն ծնանիցի՝ այսր անդր տարեալ բերել . Մի՛ թէ հնա՞ր իցէ ասել հարճաճառչ դրժունիչւան կամ քանիցաներ լայն . ամենեւին նման սոցա է և բացիչին ժողով :

3. — Դաշտակ . Երնից դաշտակ խաղոյան այտերուն իրա իւ ցըս , ասէ գրիչն որ մին յանուանի գրչաց մերոյ արդի մատենագրութեան համարեալէ : Ողո՛րմ մանունագրութիւն . — Դաշտակն ախտ ինչ է որ գաղղիարէն ictère կամ jaunisse ասի , այսինքն ախտ գեղնութեան , թուրքերէն սարււէ : — Ա՛ռ , բարեկամ , զոր ասելոց եմ և տարեալ ցուցցես բարեկամի միում գաղղիացւոյ եթէ իցէ՝ քո L' iciére bleu du ciel se réflechit sur ses joues — C'est chinois , գոչելոց է բարեկամն քո . խմանան , կամի ասել հոթենթօթերէն է , զուլուերէն է : Հ. Այտընեան ասէ (Քննակ . քերակ .) Գրաբարն անհրաժեշտ հարկաւոր է ոչքաբարէ համար միայն , այլ անառանդ աշխարհոբարէ համար : Եւ Նորայր գրէ յամին 1884ի թղթին իւրումառ Տ. Ենէ կոռզիս աշխարհոբար ոչի իրել , ուետ և իրաբար գիտնաս . Ենէ կոռզիս աշխարհոբար առջ և հիմունին իրել . ուետ և իրաբար առջ և հիմունին իրել : Ես այլուր առ . Ես աշխարհոբարն ու իւ Աշխամանեմ և ոչ կարեմ . Ես բալորին հեխուշեմ և իւ բարչեմ :

4. — Հարընտէր . Հարընտէր կանայտ և օբէրդի : Յորժամ անուս մարդիկ անսանիցեն զքո հասընտիր կանայս և օրիորդակարմասին ընդ միտս իւրեանց և ասացեն ո՛րչափ քաջ հայերենագէտ է այրդ . զիա՞րդ հնարի և դիւրագոյնս գտանէ այսչափ ընտիր ասացուածս . մի՛թէ միերք ողջոյն հայ լեզուի յուղեղի անդ նորա ամիսոփեալ փակեալ իցեն : Բայց , բարեկամ , միթէ և զմեղ կարիցե՞ս խարել . Եթէ կամիս ուսանել , երթ խուզեա քեզէն եւ որոնեա զվասն էրն :

5. — Սիւբանել . Գո՞նեա ասացեալ էր Սիւբիսնել . Գաղղիարէնն է faire de la galanterie . բանք փալուքշանաց , բանք գգուանաց , քծինք , այլովքն հանդերձ :

6. — Ալէէմ հասարաւ . Եթէ դու սիրես հաւատոալ , ես

ատեմ զհաւատոս քո : Ո՛ այր դու , խօսեաց ի լեզու հարց
քոց , ի քոյդ սեպհական լեզու . ասա՛ մեր է՞ ի հաւատալ , կամի՞
հաւատալ , հաւատած այնու՞ո , հաւանաբեռն թուէ ի՞չ : Ի ռամիկ
լեզու . կ'ուզեմ հաւատալ , հաւանական կ'երեսի , այլովքն հանգերձ :

7. — Սըսիծութիւն : Գաղղիականն է bons mots այսինքն
նուրբ և ընդուի բանեւ . հանճարեց և նուրբ բանեւ . սուր և նուրբ բանեւ :
Ի ռամիկ լեզու նուրբ ու իւլցի իսուեր . ըստքնչալի ի հաւատալից
իսուեր և այլն :

Եթե այսչափ մտադիւրն ունկնդրութեան զոր մատուցէք
ինձ մինչեւ ցայժմ , ակն ունիմ ծերում ներեւց ի տողելաստ
պատմութիւն որ չէ երկար , սակայն կարի քրքրիչ է և ար-
ժանի ծալու : Գրիչ մի ի մերոց անուանի գրչաց յաւուր մի-
ում ասէր ուրեք . Ես զգաղղիարէն լեզու քան զմեր արդի
բարբառն առաւել յաջողակ և դիպօլ ոչ համարիմաս յան-
դիման կացուցանել զմեծութիւն տեսլեանց և զքաղցրածայն
գաշնակութիւն հնչմանց . (Մէր այնուհետք առելի մէժութեանց
(!) և բաշնակութեան ընդունակ չէ ի աչծեր զդաղիեցնաւ :) Զիա՞րդ
թուի ձեզ այս ո՞չ ծիծաղիք , զքրքիծ ո՞չ բառնայք , չթալտ-
նայք ի ծալուէ : Գիտէք զգաստաւմն յաւուր միում հարեալ
յանհնարին սէր իւրոց միոյ փոքրիկ վաստակոց զոր նորոգ
գրեալ էր՝ խանդաղատէր , փայխայէր և այնչափ ջերմա-
ջերմ տրիէր ընդ այն՝ մինչեւ համարելնմա թէ հրեշտակաց
գրեալ իցէ զայն :

Զոր ինչ ասելոց էի զգեղջմանց այժմու գրչաց՝ աւար-
տեցաւ . Սակայն պարս անձին համարիմ ասու ծանուցա-
նել ինչ որ կարեւոր և պիտանի է ի շինութիւն լսողաց .
կամիմ անկեղծ լինել և ճշմարտախօս : Յորժամ զայնչափ
անթիւ խորթութիւնս և զվարաւնս ժողովէի ի լրագրաց
և ի մատենից՝ կարծէի թէ զայն ամենայն նորոց գրչաց ,
գրչաց մերոյ ժամանակի , հնարեալ իցէ : Բայց յեսոյ ի
խուզել իմում զշայկագեան բառագիրս (*) տեղեակ

(*) Հայկագեան բառագիրք՝ խառն ընդ մորգարիսա և ընդ հայկապ
շենզութիւն հին հոյ բարբառոյ՝ բարձեալ բնրէ ի ծոցի իւրում զամենայն
գարզութիւնս յետին դարուց :

եղէ՝ թէ ոչ սակառք ի խորթութեանց անտի գտանին առ
մատենագիրս յետին դարուց, զոր այժմու զրիչք մեծաւ եր-
կիւղածութեամբ քսոլ հանեալ իրբեւ ծաղիկս անուշունս ոյսը
անդը սփուեալ տարածանեն ի գիրս իւրեանց։ Այսու կրկին
հասեալ համարիմ զանձն ի կէտ նպատակի իմոյ, կամ, որպէս
ասէ առակն, միով քարիւ թուչունս երկուս որսացեալ։ Նախ
այն զի որ գրենն ի նորն հայերէն՝ զգուշացին թերեւս այ-
սուհետեւ ի կիր արկանելցյ զիսորթութիւնս զոր առ չա-
րացուք բախտ հայ լեզուի այնչափ յորդագոյնս մուծին մա-
տենագիրքն յետինք ի բարբառն մեր, որպէս եւ ի ստեղծա-
նելոյ սցլ եւս անձահ, տգեղ և խորթ յաւելուածս։ Եր-
կրորդն՝ զի խոստովանութիւն իմն լուելեայն կորզեալ առ-
նումք ի հակառակորդաց մերոց։ Քանզի որ զգայու և զգար-
շանս մատենագրացն այնոցիկ տակաւին կան և ի կիր ար-
կանեն ի միոջէ կողմանէ, և դատապարտեն և նդովիւք նը-
զովեն ի միւսմէ թերէ, յորդամտագնապեալք ի մերոցն ի նեղ
անկանիցին, ոչ ապաքէն յայտ առնեն թէ զոր նզսվինն բե-
րանով՝ յայն սրտիւ իւրեանց յարեալ են։

Պ. թ.

(Մարտուսի յատակ)

ԳՈՐԾՔ ԱԲ ԽՆԴԲԵՆ ԹԱԳԱԽԱԲ

Գործք տաղլկացեալ

Յընկերիաշտութենէ,

Արարին աղաղակաւն իւրեանց այնպէս,

Մինչեւ Ռմիլդդ արկ ըզնոսա նդ միահեծան իշխանութեամբ:
Ընկեցաւ նոցա յերկնից թագաւոր ոմն խաղաղատէր։

Այլ թագաւորս այս յանկանեն արար դղբրդիւն իմն այնպիսի,

Մինչեւ սերունդն այն մօրական,

Սերունդ վատ յոյժ, եւ յոյժ երկչու,

Դընաց զօղել զանձն ընդ ջըրով,

եւ ի կընիւնս եւ յեղեգունս

Լեալ ծակախիթ ի ճախճախուտն։
Դէմ յանդիման հայել չիշխէր ոք լնդ երկար
Յայն որ թուեցաւ նոր իմն հրսկայ։
Էր այն սակայն հեծան մի մեծ,
Ուր ծանրութիւնն արկ զառաջինն աև ի նոսա։
Յետուստ ուրեմն հայել ի նա համարձակեալ
Մին ի նոցունց եթող զիւր որջ.
Գնաց ի հուան ըգդողանի։
Մեւմն ըգկընի չոքաւ նորա, մեւս եւս նոյնպէս։
Եկին ապա այլք բազմախուռն։
Եւ հուսկ ապա ողջոյն երամն ընդելացաւ,
Մինչեւ ոստնուլ յուս արքային։
Բարին իշխան տայ նոցա թոյլ, կայ միշտ հանդարտ։
Յետ սակաւուց փոքքը մեւս եւս ցնորէր Արմիդդ.
«Տուր մեզ,» գոչէր այն խառհաղանթն, «ա'յլ թագաւոր
գնայուն շարժուն։»
Եւ թագաւորն դից առաքէ նոցա ըգկուռնկ։
Սա ջախջախէր զնոսա, եւ մերմ ըսպանանէր.
Է զի կանէր ողջ, թէ կամէր։
Յախժամ բառնան գորտք ըգբողոք,
Եւ Արմիդդ ասէ ցնոսա։ «Բա՛թէ, ձեր կամք
Բըռնադատե՞օ ինչ իցէ զիս։
Ո՞չ լաւ այն էր ձեզ ի սկըզբան
Ջազատութիւն ձեր ունել պինդ։
Զի յարարէք դուք զայն, արժան էր ձեզ հանել
Ընդ թագաւորն ձեր որ էր խեղ ոմն եւ լուր,
Ապա զայժմու տեառնէդ ձերմէ եղերուք գոհի,
Գուցէ քան զայն հանդիսաչեզիք յոռեգունին։»

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ

2

ԶԱՅԳՈՅ. առաւտօբը. հետեւելու առաջուն : *Զայգոյ Զատկին ելին սրգիքն իսրայելի : — *Սրարին զԶատկին յերեկորեայ , և կերան ի ցորենոյ երկրին զայգոյ՝ բաղարջ և նորի :

ԶԱՆՅ ԱՌԱՆԵԼ. Բողութ անշնէլ . նայիլ . հոգ լանիլ : *Մի՛ զանց առներ ի ծառայէ քումմէ : — *Կամէր զանց առնել առ նոր քօք : — *Տեսեալ զնա՝ զանց արար : — *Մի՛ զանց առնիցես զնովաւ : — *Աստուած իմ մեծ է , և ոչ արասցէ զանց զի՞նեւ :

Կամ՝ ժերալնշել . յանիւու ըլլու : *Բառնայ զանօրէնութիւնը , և զանց առնէ զանիրաւութեամբք : — *Ժողովուրդ ըդ ժողովրդ եամբ զանց արասցէ :

ԶԱՆՅ ԼԻՆԵԼ. զնա՝ առնուիլ . մոռցուիլ : *Զի ոչ զանց եղեւ ի նոցանէ բան մի :

ԶԱՆՅԱՆԵԼ ԶԱՐԱՄԲ , ԶԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՄԲ . ամուսնացեալ կը- նով չնուիւ ժործելը : *Ամենայն կին որ զանցանիցէ զարամբ իւրով : — *Զանց զամուսնութեամբն :

ԶԱՌ Ի ԹԱՓ՝ Ի ԿՈՂ. ճէկ կոչ ծռած . ժէլ ճը պառկած . ծռուռ . դուռուծը : *Ի վերոյ և ի ներքոյ առիւծուցն և եղանց՝ տեղիք , գործ զառ ի թափի : — *(Եթէ) դիպեսցի զառ ի թափ տեղի , ոչ դադարէ (գունդն) ի գնացից : — *Որ ընդ զառ ի կող ճանապարհ գնայ , եթէ ոչ զգուշանայ , ի հարկէ գայթակղի :

ԶԱՌ Ի ՎԱՅՐ . դարսաւու ուել : *Իբրեւ զջուր հոսեալ ընդ զառ ի վայր : — *Մերձ եղեւ ի զառ ի վայր լերինն Զիթե- նեաց :

ԶԱՌՈՒ Ի ՎԵՐ. ԴՄՈՒՄ-ՋԵՐ ՊԵՆ: *ՈՐ Է ՀԱՆԴԻԱԿ զառ ի վերին: — *ԵԼԱՆԻՒՆ ԸՆԴ զառ ի վեր քաղաքին: — *ԵԼԱՆԻՐ ԸՆԴ զառ ի վերն Զիթենեաց:

ԶԱՌՈՒ Ի ՎԵՐԱԿ. ՊՐԵՏ ԴՄՈՒՄ-ՋԵՐ: *ԵԼԱՆԻՐ ՆՄ ԸՆԴ զառ ի վերակն ի ԲԵԹԵԼ:

Ի ԶԱՐԹՄԱՆ ՀԱՐԿԱՆԻՄ. ԽԱՆԸ ՇՄԱՆԻԼ. ԱՐԲԱՆ ՖԱՆԼ: *ԵԼ ԷՌ ՊԵՌ ի զարթման էի հարեալ:

ԶԱՐԿԱՆԻՄ ԶԳԵՏՏԻ, ԶԵՐԿԻ, ՔԵՊԻՆ ՀՐԱՆԵԼ: *ՅԵՄՍ յետը չոգան, և զարկան զգետնի: — *ՅԵՄՍ յետս չոգան և զարկան զերլլի:

Ի ԶԱՐՄԱՅՄԱՆ ԼԻՆԵԼ. ՄՊՃԼ ՖԱՆԼ. ՖՐԻՆ ՅԱՒԺՄԱԿՐԵԼ. ՀԻՄՆԱԼ: *ԿԱԼ յաղօթու ի տաճարին, լինել ի զարմացման:

ԶԳԱԼ ԱՆՁԻՆ, ԽԵԼԱՑ. ԽԵԼԸ ՀԵՄ-ԵԼ ՀԵՄ-ԵԼ. ՄՊՃԼ: *ՀԵՂՄՈՒ-
ԴՊՐՈՍ ի լրեւ անձին զգաց: — *ՄԻՒԹ-ԱՐԵԱԳ զնոսա Յուղա
անձին զգալ: — *ՄԻ-ԱՓԵԱՍԳԻՆ և զգայցեն խելաց իւրեանց:

ԶԳԱՍՑ ԼԻՆԵԼ. ԽԵՆԱՆ. ԽԵՆ ՊՐՈՒ-
ԴՊՐԵ Յուղա վասն անօրէն խակութեան վեասին: *ԶԳԱՍՑ
ՄԻՆԻՐ նաբուգունոսորայ զհօրն վախճանէ:

ԶԳՈՅՑ ԼԻՆԵԼ, ԿԱԼ. ՉԴ-ՀԱՆԵԼ. ԺՐ ՇԵՆԵԼ. ՄՊՃԼ: *ԲՂ-
ԳՈՅՀ ԼԵՐ, գուցէ անցանիցես լնդ. այն տեղի: — *ԶԳՈՅՀ ԼԵ-
ՐՈՒՔ ի տուտ մարգարէից: — *ԶԳՈՅՀ ԼԵՐՈՒՔ անձանց ի խմո-
րէ Սալուկեցւոցն, որ է կեղծաւորութիւն: — *ԶԳՈՅՀ ՄԻ-
ՆԻԾԻՔ (աղէկ նայէ՛) պատանեկին Արեսողմայ: — *ԶԳՈՅՀ կա-
ցէք անձանց: — *ԶԳՈՅՀ կացէք, մի՛ ոք զիտասցէ: — *ԲՂ-
ԳՈՅՀ ԼԵՐ սպասաւորութեանդ:

Ի ԶԳՈՅՑԻ ԱՌԱՆԵԼ. ՉԴ-ՀԱՆԵՆԵՐԸ պահէլ. ՉԴ-ՀԱՆԵՆԵԼ: *Ի ըշ-
դուշի արա դու զմեզ, զի մի՛ լնդ քո այլ ումեք երկիր պա-
տանիցեմք:

ԶԵՏԵՂ ԱՌԱՆՈՒԼ. ՄԵՌ զԶԵՏԵՂ ԱՌԱՆՈՒԼ: *ՆԱՆ անդէն
զետեղ առեալ պահեացի ի նաւահանգստին:

Ի ԶԵՆ ՎԱՌՈՒՄ. ՉԴ-ՀԱՆԵԼ: *Ի զէն արքունի վառէր:

ԶԻՒՐՈՎԻՆ ԵՐԹԱԼ. ԲԻ+ՅԻՆ+Ը ԱՐԱՆԵԼ: *Զգեաց զսուսեր, և
կամէր երթալ զիւրովին: — *Եղ զսուսերն, և չոգաւ զիւ-
րովին:

ԶԱՆԻ՛ ԶՀԵՏ ՊՐԴԻՄ, ՄՏԱՆԵԼ, ԼԻՆԵԼ. ԷՐԵ-ԷՆ ՀՄԱՆԵԼ էյ-

նալ. հալածել. +լւլ. *Պնդեցաւ զկնի նորա գիշերի՝ ինքն և
ծառայք իւր. — *Պնդեցան արքն զկնի նոցա զճանապարհն
Յորդանանու : — *Հնդէ՞ր է այդ, տէր իմ, զի մտեալ ևս
զկնի ծառայի քոյ, — *Զկնի լինէր նորա Յովեաթան տալ
մարտ պատերազմի :

Ի ԶՆԻՆ. դիտելու. նայելու. ֆնորելու : *Որք միանդամ ի
զնին տեսլեանն եկին, սուր ի վերայ եղեալ կոտորեաց : —
*ԵԼ Դինա . . . ի զնին դատերաց աշխարհին :

Ի ԶՆԻՆ ԳԱԼ. զնուել. ալէ առէ էնուլ : *Ասեն և զրնութենէ
երկնից խմաստունքն Յունաց՝ (թէ) ի զնին գան :

ԶՈՐ ՕՐԻՆԱԿ. օրինակի համար. ինպէս որ . ըսեն+ նէ : *Այնպէս
եկեացէ, զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս : — *Զոր
օրինակ զջուր ընդ գինի ոք խառնէ : — *Զոր օրինակ մար-
մոյ ի սուրբ օդ վայելեալ՝ առողջագոյն լինի :

ԶՐԱՀԵՏ ՎԱՐԻՄ. դու՞ տեղը երեւէ է յնալ : *Կրօնիւք հրե-
տակաց զոր չիցէ տեսեալ՝ զրահետ վարել (կամիցի :

ԶՐԱԻ ԱՌՆԵԼ. վերջ առլ : *Զրաւ արարէք պատերազմաց :

ԶՐԱԻ ԼԻՆԵԼ. վերջ ժալ վերջնալ : *Յորժամ տեսողացն
զրաւ լինիցի : — *Զրաւ հարսանեացն լինիցի :

ԶՐՈՅՑ ՏԱԼ. դշուն-իլ. հայուկուլ. ըսել : *Զրոյց ետ և զգե-
րել տապանակին : — *Այնպէ՞ս իցէ, որպէս գու զրոյց տաս :

ԶՈՐ ՀԱՏԱԿԵԼ, ԱՌՆԵԼ. զբէ+ ժողվէլ : *Ի գալուստ ամին
միւսոյ՝ զօր հատանէր : — *Զօր արարեալ զօրավարն սպա-
րապետն Մանուէլ . . . (լսաղայր :

ԶՕՐԱԺՈՂՈՎ ԼԻՆԵԼ, ԱՌՆԵԼ. տես զվերինոդ : *Դեմետր
արքայ զօրաժողով լինէր : — *Զօրաժողով եղեւ Յէսու ի վե-
րայ Յովրամայ : — *Մարախ զօրաժողով լինի (և ժողվո՞ն) . . .
օրինօք : — *Տէրն մեր ի զօրաժողովն առնել հոգւոց՝ քննէ
զրաւս և զկամս մարդկան :

ԶՕՐԱՀԱՏՈՅՑ ԱՌՆԵԼ, ԼԻՆԵԼ. ժամ ճը զբէ պէկէլ. զբաց մէն
հասովէ երթալ : *Հրաման տայր Յուդա, զօրահատոյց առնէր
ի վերայ բերդին : — *Իրեւ զօրահատոյցն առնէր Շապուհ
զզօրս իւր ի վերայ աշխարհին Հայոց : — *Զօրահատոյց լի-
նէր, և գայր պաշարէր (զբէթթէք :

ԶՕՐԸՆՏԻՐ ԼԻՆԵԼ. ըստունէ+ զբէ ժողվէլ. զբաց ընդիւները կո-

Էլ : *Դարձաւ Յովսաթան , զօրընտիր լինէր , զծերակոյտն
ի խորհուրդ կոչէր :

Ը

Ե՞ր ԶԻ . Էրբեն . Գըն : *Ե՞ր զի նշանօք ցնորիցն պակչէ-
ին , և է՞ր զի մատնութեամբք լքանէին :

Ե՞ր , է՞ր ՎԱՍՆ , ՎԱՍՆ Ե՞ր , ԵՐՈՒՄ . Բնշ՞ու . Է՞նչ . Է՞նչ
բանէ համար . Բնիշ՞ու : *Եթէ նա գրգռեաց , իսկ է՞ր , ընդէ՞ր
դատի : — *Ե՞ր վասն ոչ ասաց զայդ : — *Վասն է՞ր եղեւ
ընդ քեզ այդ անցք : — *Երս՞ում ոչ ասաց՝ թէ զգոյշ լինի-
ցիք ի վարդապետութենէն :

Ը

ԸՄԲՈՒՆ Ե . Կը կայիւ . յարմար է : *Բմբոն և ի գէպ է ասել :
ԸՆԴ ՇԱՏ ԵՒ ԸՆԴ ՓՈՔԻ . առելի կամ պակաս . կը հաշուած :
*Հազար չորեքհարիւր և երեսուն ամ . . . ընդ շատ և ընդ
փոքր :

ԸՆԴԱԹՈՒՐ ՀԱՐԿԱՆԵԼ . տես զԱՌԱԹՈՒՐ ԱՌՆԵԼ : *Ասաց
. . . զերիտասարդս իմ ընդաթուր հարկանել :

ԸՆԴ ԱՌԱՋ ԵԼԱՆԵԼ , ԼԻՆԵԼ . առջեւ էլլեւ . բէմարիւլ : *Ել
Յայէլ ընդ առաջ նորա : — *Ել Պտղամէսս ընդ առաջ նորա
զօրօք բազմօք : — *Ելին նմա քաղաքացիքն ընդ առաջ : —
*Ծնդ առաջ եղեն նմա հրեշտակք Աստուծոյ :

ԸՆԴԳՐԿԵԼ ԶՅԵՌՆ . յեւ+ը յեւ+ին զեայ բերեւ կենալ (ձուլու-
թէնէ :) *Սակաւիկ մի ընդգրկիցե՞ս զձեռն քո ի վերաց լան-
ջաց քոց :

ԸՆԴԴԵՄ ԿԱԼ . դեմ կենալ . հայուածէլ : *Ոչ ոք կացցէ ընդ-
դէմ ձեր : — *Եթէ բռնասցի մին , երկուքն կայցեն ընդդէմ
նորա :

Տ . Գ .


ՊԱՅՄԱՆՔ

Ա. Գին միամեռյ բաժանորդութեան Հանդիսիո՝ 25 դա-
հեկան սովորույթ , հատուցանելի կանխաւ .

Բ. Մախսք թղթատարի ի գաւառու և յերկիր օտար՝ դա-
հեկան արծաթոյ 6 ի տարւով .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն գիր
առաքել պարու է , յանուն խնամակալաց Հանդիսիո , առ Տ-
նշան կ . Պէրակէրեան , տպագրիչ ի կ . Պոլիս , յիսկի Զապ-
թիէ ճատաէսի , թիւ 63 .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիո մարթ է սատանալ 9 դա-
հեկանոց առ տանենայն գրավաճառու կ . Պոլոց :



ՎՐԻՊԱԿԱՔ

Եջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
28	30	Հայրենագէտս	Հայրենագէտս :



معارف افشارت

۹۱۰۰ نومروی رخصتمامیله طبع اوانت

د. ع. د. ع. د. ب.
۹۱۰۲۶۴۸۷۰۳